Ազգ Azg
23 ՅՈՒՆԻՍ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 115 (4495)
ISSN: 1829-1651

# Ադրբեջանական հերթական նախաձեռնություն ԵԽԽՎ-ում

ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության անդամ Ռաֆայել Հուսեյնովը հունիսի 21-ին տարածել է «ԼՂ հարցով ենթահանձնաժողովի գործունեությունը ինտենսիվացնելու անհրաժեշտությունը» վերտառությամբ մի հայտարարություն:

«Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, հայտարարության մեջ ողջույնի խոսքեր են ուղղված ԵԽԽՎ-ի նոր ղեկավարության ջանքերին՝ ակտիվացնելու ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի աշխատանքները:

Հռչակագրում նշվում է, թե «ԼՂ խնդրի լուծման նպատակով ստեղծված ԵԱՀԿ Մինսկի խումբը չի փոխարինում այդ ենթահանձնաժողովին»: Հռչակագիրը ստորագրել են 20 երկրների 40 պատվիրակներ:

Ա. Հ.

# Սեմնեքին «փորձում է» հաշտեցնել

## Ըստ ԱՄՆ կոնգրեսականի՝ Ադրբեջանը թաքցնում է իր ռազմատենչ հայտարարությունների «պտուղները»

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ընթացքում մեկ անգամ չէ, որ հրադադարի խախտում է տեղի ունեցել, սակայն ոչ մի անգամ չի հնչել այնպիսի հայտարարություն, որ իսկապես վերջ կդներ մարդկային կյանքեր խլող կրակոցներին:

Եվ հետաքրքրական է, որ գրեթե միշտ եւ գրեթե բոլորը բավարարվում են դատապարտման խոսքեր ասելով, երբ կրակոցների հիմքն ամենից առաջ «ապահովվում է» ռազմատենչ ու հիստերիկ հայտարարություններով ու սպառնալիքներով: Իսկ այդ սպառնալիքներին արդեն հոգնեցնելու աստիճան կրկնված պատասխան է հնչում, թե պատերազմը խնդրի լուծում չէ: Սրանից դենը ոչ մեկը չի գնում ու ոչ մի տաք գլխի չի «պարտադրում հասկանալ», որ պատերազմն ու ռազմական գործողությունները իսկապես էլ չեն կարող լինել հակամարտության կարգավորման առումով:



Սակայն քաղաքականության ու մեծ տերությունների եւ դրանց միավորումների շահերի դրսեւորումները միայն այս տարօրինակությունը չէ, որ կարող են արտահայտել:

Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ **Փիթեր Սեմնեքին** «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում անցած շաբաթավերջին Մարտակերտի շրջանում տեղի ունեցածը «ցավալի միջադեպ» որակելով՝ ասել է, թե միջադեպը վկայում է, որ շփման գոտում «իրավիճակը լարված է եւ հեշտությամբ կարող է դուրս գալ վերահսկողությունից»: Եվրոպացի պաշտոնյայի կարծիքով, անհրաժեշտ է ձեռնարկել «բոլոր հնարավոր միջոցները՝ լարվածությունը մեղմելու համար», ինչը «կնպաստի նաեւ բանակցությունների ընթացքում լուծումներ գտնելուն»:

Տես էջ 3

ԲԵՌԼԻՆ

# «Գերմանիան աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբին»

Այս հայտարարությունն արել է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը՝ այցով Բեռլինում գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումից հետո կազմակերպված մամլո ասուլիսում: «Հակամարտության կարգավորումը իսկայական նշանակություն ունի ամբողջ տարածաշրջանի համար, եւ մենք աջակցում ենք Մինսկի խմբի ջանքերին՝ ուղղված ԼՂ հարցի խաղաղ կարգավորմանը», նշել է Մերկելը: Իր հերթին Հայաստանի նախագահը երախտագիտություն է հայտնել Բեռլինին՝ «Հարավային Կովկասի նկատմամբ հավասարակշիռ քաղաքականության եւ աճող հետաքրքրության, ինչպես նաեւ Հայաստանին ցուցաբերվող օժանդակության համար»: Երկու երկրների ղեկավարները անդրադարձել են նաեւ երկկողմ տնտեսական, քաղաքական հարաբերություններին, Հայաստանի քաղաքացիների համար ԵՄ մուտքի վիզաների տրամադրման կարգը հեշտացնելու գործընթացին, ինչպես նաեւ հայ-թուրքական գործընթացի ներկա փուլին:

Հ. Ա.



# 69 տարի անց մոմեր վառվեցին Ռուսաստանի քաղաքներում

69 տարի առաջ՝ հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը, առավոտյան ժամը 4-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա: Նույն ժամից սկսված երեկ Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Նիժնի Նովգորոդում, Սարատովում, Ռյազանում եւ այլուր հազարավոր մարդիկ մոմեր են վառել՝ ի հիշատակ Հայրենական պատերազմի զոհերի:

Երկրորդ համաշխարհայինը խլեց 27 մլն սովետական քաղաքացու կյանք: Իսկ Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների համաձայն, այսօր ՌԴ քաղաքացիների 51 տոկոսը վստահություն է հայտնել, որ ֆաշիստների հարձակումը անակնկալ է եղել ԽՍՀՄ համար, հարցվածների 40 տոկոսը հակառակ կարծիքին է: 30 տոկոսը բազմամիլիոն զոհերի համար գլխավոր մեղավոր է համարում ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինին: 28 տոկոսի համար մեղավորը գերմանացիներն են, 20 տոկոսը կարծիք է հայտնել, թե ԽՍՀՄ-ը այդքան զոհ տվել է կոմունիստական կուսակցության պատճառով, իսկ 11 տոկոսը առհասարակ մեղադրել է բոլորին:

Հայրենական պատերազմին մասնակցեցին 600 հազար հայաստանցիներ:

Հ. Ա.

# Կոնֆերանսներ ղարաբաղյան թեմայով

**«ԱՄՆ-ի ռազմավարությունը Հարավային Կովկասում եւ կասպյան տարածաշրջանում. ԼՂ հարցի խաղաղ կարգավորում», այս թեմայով, ըստ «ԱՊԱ» գործակալության, հունիսի 24-ին Վաշինգտոնի ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնում կանցկացվի միջազգային կոնֆերանս, որին կմասնակցեն հայտնի ամերիկացի փորձագետներ, Հարավային Կովկասի երկրներից՝ Հայաստանից, Վրաստանից եւ Ադրբեջանից ներկայացուցիչներ:**

**Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման թեմայով եւս մեկ կոնֆերանս կանցկացվի նույն օրը՝ Սան Խոսեի խաղաղության եւ արդարության կենտրոնում:**

Հ. Ա.

ՀԱՄԱՌՈՏ

# Որոշ շերտեր ավելի դյուրին կտեղաշարժվեն ԵՄ տարածքում

**Ազգային ժողովի եվրոինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի եւ Հայաստանում Լեհաստանի դեսպան Զդիսլավ Ռաչինսկու երեկ կայացած հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են ԵՄ երկրներ վիզաների դյուրացման հարցեր: Ն. Զոհրաբյանը հղում է արել Արեւելյան գործընկերության ծրագրի այն դրույթին, թե անվտանգ միջավայրում քաղաքացիների ազատ տեղաշարժը Արեւելյան գործընկերության կարեւոր բաղադրիչ է: Դեսպանն էլ նշել է, թե Լեհաստանը ջանքեր կգործադրի ուսանողների, գիտնականների եւ որոշ խավերի ներկայացուցիչների համար վիզաների խնդիրը հնարավորինս դյուրացնելու, ինչպես նաեւ վիզաների համար գանձվող գումարը նվազեցնելու ուղղությամբ:**

Մ. Խ.

# Ո՞վ կբարձրանա ՀՀՇ-ի երիվարը

**Երեկ հայտնի դարձավ, որ ՀՀՇ համագումարը, որն ըստ կանխատեսումների խոստանում է սկանդալային լինել, կայանալու է հուլիս 17-ին, կառավարության նիստերի դահլիճում: Սկանդալայինը չգիտենք, բայց որ այս համագումարն իսկապես կարող է ՀՀՇ-ի համար նշանակել մինչեւ այժմ անցած ճանապարհի վերջ եւ ինչ-որ նոր բանի սկիզբ, սա՝ հաստատ: Իսկ թե այդ նորը կլինի՞ իսկապես նոր, սա արդեն կերեւա վարչության ղեկավարության նոր կազմից: Կամ էլ, ինչ իմանաս, գուցե հները՝ հրաժարական տվածները նորից ձիու վրա բարձրանան:**

Մ. Խ.

# ԲՀԿ-ի նոր թեկնածուն՝ նախարարի պաշտոնի համար

**ԲՀԿ-ն աշխատանքի եւ սոցապ նախարարի պաշտոնում կառաջադրի Արթուր Գրիգորյանի թեկնածությունը. այս մասին երեկ լրատվամիջոցներին հայտնել է ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանը: Արթուր Գրիգորյանն իրավաբան է, աշխատում է Վերահսկիչ պալատում որպես վարչության պետ, ԲՀԿ անդամ է, Կոտայքի մարզի Բջնի գյուղից:**

Մ. Խ.

# Կոլոմբիեն այլեւս Հայաստանի հարցով համազեկուցող չէ

Ժորժ Կոլոմբիեն դադարեցնում է իր աշխատանքը որպես Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) Հայաստանի հարցով համազեկուցող՝ ժամկետը լրանալու կապակցությամբ: Այդ մասին ֆրանսիացի խորհրդարանականը հայտնել է ԵԽԽՎ-ի Մոնիտորինգի հանձնաժողովի երեկ տեղի ունեցած նիստում:

Նիստում, ըստ «Ազատության», որին մասնակցել են նաեւ Հայաստանի հարցով մյուս համազեկուցող Ջոն Պրեսկոտը, ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը եւ պատվիրակությունում Դաշնակցության ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացվել է 2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձությունների հետեւանքների վերացման ուղղությամբ խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի առաջարկների իրականացման ճանապարհային քարտեզը:

Ա. Հ.

# Ադրբեջանը չի՞ կարողանում վերահսկել իր հրամանատարներին

Ըստ պաշտպանության նախարարության լրատվական ծառայության տարածած հաղորդագրության՝ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** մի քանի մեկնաբանություն է արել հունիսի 18-ի գիշերը Ադրբեջանի կազմակերպած դիվերսիոն գործողության մասին: Նախ նա եւս սադրիչ դիվերսիա է անվանել այդ գործողությունը, որն ունի հայ-ադրբեջանական շփման գծում իրավիճակը ապակայունացնելու եւ ռազմական գործողությունների ծավալումը հրահրելու նպատակ, իսկ Մինսկի խմբում ընթացող բանակցությունները Ադրբեւջանի համար լոկ քաղաքական շղարշ են պատերազմը նախապատրաստելու համար. «Այս դիվերսիոն գործողությունը գործնականում ապացուցում է նաեւ այդ պետության կողմից իր ռազմական դոկտրինում հայեցակարգային մակարդակով ԼՂ հիմնախնդրի լուծման ռազմական ուղու ամրագրումը», ասել է Ս. Օհանյանը՝ մտահոգիչ համարելով, որ Ադրբեջանի ղեկավարությունը կազմակերպած դիվերսիա չի համարում եղածը եւ այլ լույսի ներքո է փորձում ներկայացնել. «Եթե դա կազմակերպված դիվերսիա չի եղել, ուրեմն ինքնագործունեություն է, ինչն ապացուցում է մեր այն կանխատեսումները, որ սպառազինությունների եւ ռազմամթերքի քանակությունից ոգեւորված Ադրբեջանի ղեկավարությունը չի կարողանում վերահսկել սեփական զինված ուժերի ստորաբաժանումներն ու նրանց հրամանատարներին: Դա հղի է անկանխատեսելի հետեւանքներով հենց Ադրբեջանի համար, քանի որ կարող է օրինակ հանդիսանալ եւ շղթայական ռեակցիայով ինքնակամորեն, առանց հրաման ստանալու կրկնօրինակվել մյուս հրամանատարների կողմից: Ադրբեջանի կողմից ցանկացած ճանապարհով ռազմական գործողությունների ծավալման դեպքում ԼՂՀ զինված ուժերն արժանի հակահարված կտան, սակայն անհասկանալի է, թե հրահրելով պատերազմ, Ադրբեջանի իշխանություններն ինչպե՞ս են պատրաստվում ղեկավարել ինքնագործունեության էյֆորիայի մեջ ընկած սեփական հրամանատարներին», ասել է Հայաստանի պաշտպանության նախարարը:

Մ. Խ.

AZG NEW PDF.qxd 22/06/2010 21:36 Page 1





ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# «Հայաստանի նախագահը աջակցություն է ակնկալում»

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն առաջին անգամ է իր պաշտոնավարման ընթացքում Գերմանիա այցելում: Հարավային Կովկասի փոքրիկ փոխրիկ երկրի ղեկավարը հույս է տածում, թե Գերմանիան կօգնի, գերմանական «Ֆրանկֆուրտեր ռունդշաու» օրաթերթի հունիսի 22-ի համարում գրում է dpa-ի լրագրող Ուլֆ Մաուդերը՝ Երեւանից:

«Հայաստանի նախագահը աջակցություն է ակնկալում» վերնագրյալ իր հոդվածում այնուհետեւ կարդում ենք՝ Երեւանի Սիրահարների այգում դիմահայաց նախագահական իր նստավայրում Սերժ Սարգսյանը Գերմանիայի հետ հարաբերությունների մասին գովեստով է խոսում՝ դրանք «լավ» որակելով, նշելով նաեւ վերջերս Գերմանիայում վերապատրաստված հայ զինվորների՝ գերմանական բանակի շարքերում Աֆղանստանում ծառայությունը: Գերմանիան ԱՄՆ-ից հետո ամենամեծ դոնորն է Հարավային Կովկասի աղքատացած այս երկրի համար: Հիմա մեր հարաբերությունները ավելի պիտի սերտանան, ասում է Սարգսյանը՝ հունիսյան շոգ այդ օրը: «Նպատակ ունենք այնպես ապրել, ինչպես Եվրոպայում», ընդգծում է 55-ամյա Սարգսյանը: Նա գիտի, որ դա հեռակա նպատակ է: Նրա երկրի քաղաքացիները տառապում են ոչ միայն կոռուպցիայից ու պաշտոնյաների կամայականություններից: «Մեր ժողովրդավարական կառույցները թերզարգացած են: Բազմաթիվ ոլորտներում մարդու իրավունքները ոտնահարվում են: Մեր ընտրական համակարգը խնդիրներ ունի: Այս բոլորը ոչ ոք ինձանից ավելի լավ չգիտի»: Բայց Հայաստանն իր տնտեսությունը ու ժողովրդավարությունը զարգացնելու կամք ունի:

1988-ի ահեղ երկրաշարժի եւ Ադրբեջանի պահանջած Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետեւանքները դեռ շոշափելի են: Մոտ 7 միլիոն հայկական ծագմամբ Սփյուռքը ամուր թիկունք է կանգնում երկրին, բայց դա էլ բավարար չէ հազիվ երեք միլիոն կազմող բնակչության համար: Սարգսյանին հաջողվում է վերջիվերջո նորից Հայաստանը աշխարհի հանրության ուշադրությանը ներկայացնել: Ոչ միայն այն պատճառով, որ նա անզիջում ձգտում է ԼՂ անկախության ճանաչմանը: Սարգսյանի պայքարը նաեւ 1915-ին Օսմանյան կայսրության հայերի դեմ թուրքական ջարդերը որպես ցեղասպանություն ասիճանավորելն է: Շատ երկրներ են սա ընդունել, բայց Գերմանիան՝ դեռեւս ոչ, հավանաբար նաեւ իր թուրքական ուժեղ փոքրամասնության պատճառով: Ցեղասպանության հարցը, ինչպես նաեւ ղարաբաղյան չլուծված խնդիրը հանգեցրին նրան, որ Թուրքիայի հետ հարաբերությունների վերականգնման՝ Սարգսյանի երկար ձգտումը չկայացավ: Թեեւ նա հետագայում էլ մերձեցման ցանկություն ունի, բայց Անկարայի ներկայիս ղեկավարության հետ սա շատ դժվար է, ասում է ՀՀ նախագահը: Նախ եւ առաջ դեռ փակ է հարեւանի հետ սահմանը՝ Հայաստանի համար կարեւոր առեւտրային ուղին: Սարգսյանը այժմ պիտի բացատրի Մերկելին, թե փոքրիկ Հայաստանը իսկապես հարեւաններից՝ Թուրքիայից եւ Ադրբեջանից որքան սպառնալիք է զգում եւ էսկալացիայի դեմ Արեւմուտքն ինչ կարող է անել:

Սարգսյանի՝ իբր մեքենայություններով անցած ընտրության դեմ արյունոտ անկարգություններից երկու տարի անց Երեւանն այսօր ներկայանում է որպես գործունյա մայրաքաղաք: Վարչապետ Սարգսյանը մոտավորապես ԵՄ խորհրդատուի է ունկնդիր լինում կառավարության ապարատը նորացնելու հարցում: Որոշ տվյալներով՝ բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպություններ կարող են Հայաստանում ազատ աշխատել: 2008-ին նախագահական ընտրություններում պարտված նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը դեռեւս խոսում է Սարգսյանի ղեկավարման լեգիտիմության մասին: Նա վկայակոչում է արեւմտյան դիտորդների՝ ժամանակին հայտնաբերած մեծ ընտրախախտումները:

«Ոչ մի օրենք չի պաշտպանում մեր քաղաքացիներին, ոչ մի օրենք չի պաշտպանում գործարարությունը: Դատարանները իշխանություն ունեցողի ձեռքում են: Չկա անկախ հեռուստակայան», զրույցի ժամանակ ասում է Լեւոն Տեր-Պետրոսյանը: Փողոցում հանդիպած մարդկանցից նորից ու նորից ես լսում, թե ուզում են առաջընթաց տեսնել:

Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանն ասում է, որ Հայաստանում ոչ մի քաղաքական ուժ ժողովրդավար չէ: Օլիգարխների ուժեղ ազդեցությունը կրող տնտեսությունը եւ հավաքների ազատության ոտնահարումը նաեւ մտայնության (մենթալիտետ) ու մշակույթի խնդիր են, ասում է Հարությունյանը: Մինչեւ իսկական ժողովրդավարություն դեռ շատ երկար ճանապարհ կա:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Կարապետիչը, Ձյունանուշիկը, Ռաֆիկ Պետրոսյանն ու 30 ձուն...

«Եթե նման անազնիվ քաղաքական մթնոլորտ է տիրում, ապա մեկը պետք է լինի, որ ազնիվ քաղաքական դաշտ ստեղծի: Թե չէ կաշառակերության համար պայքարում են, բայց միայն թղթի վրա: Հայտարարություն են անում, բայց մեկ ամսից մոռանում: Չեն տեսնում էս օլիգարխիկ մթնոլորտը»: Այսպես է մեկնաբանում ազնիվ դաշտ ստեղծելու իր որոշումը Ժողովրդական կուսակցության նախագահ **Տիգրան Կարապետյանը**: Նախաձեռնությանը միացել են ՀԱՍԿ նախագահ Մովսես Շահվերդյանն ու մի քանի հասարակական կազմակերպություններ: Հանրապետական պատգամավոր **Ռաֆիկ Պետրոսյանն** էլ Կարապետիչի նախաձեռնությունը համարում է ուտոպիա, որովհետեւ ազնիվ դաշտ ստեղծելու համար պետք է ունենալ ազնիվ հասարակություն, ինչն այսօր Պետրոսյանը չի տեսնում: Շարունակելով «անազնիվ հասարակության» իր թեզը Պետրոսյանը հիշեցրեց, որ ԺԿ-ն գյուղացիների համար շատ բան է արել, բայց նրան ձայն չեն տվել: «Որովհետեւ կուբամետրերով ձայն եք կեղծել», ասաց Տիգրան Կարապետիչը՝ հավելելով, որ ի տարբերություն ուրիշ կուսակցությունների՝ ինքը երբեք չի փորձել կաշառք բաժանել: Ռաֆիկ Պետրոսյանն էլ հիշեց, որ մի քանի տարի առաջ աղմուկ էր տարածվել, որ Նորքում պրոֆեսոր Պետրոսյանը ձվեր է բաժանում, յուրաքանչյուրին՝ 30 ձու: «Զարմացա, պարզվեց, որ ձու բաժանողը ձեր մարդկանցից է, կանչեցինք այդ մարդուն, ասաց՝ այո, ես եմ արել, բայց ոչ ընտրության օրը», ասաց ՀՀԿ պատգամավորը: «Դա Զատիկին էր եւ բարեգործություն էր», լրացրեց Կարապետյանը՝ առաջարկելով Ռաֆիկ Պետրոսյանին խաչ քաշել:

Պետրոսյանը խաչ չքաշեց, բայց չմերժեց, որ ՀՀԿ-ն էլ է մեղավոր, որ հասարակությունն անազնիվ է: Նրա խոսքերով՝ լավ չեն պայքարում կաշառակերության, օլիգարխիայի դեմ: Սակայն ընտրությունների ժամանակ ամենից շատ հենց ՀՀԿ-ն է 5000 դրամով գնում ընտրողին, ինչ վերաբերում է օլիգարխիային՝ ՀՀԿ-ի շնորհիվ դրանք ԱԺ-ում շատ են: Ընդհանրապես Ռաֆիկ Պետրոսյանի խոսքը ռոպեի ընթացքում փոխվում էր: Մեկ նա ընդունում էր, որ ոչ միայն ՀՀԿ-ում, այլեւ բոլոր կուսակցություններում էլ կան օլիգարխներ, բիզնեսմեններ, հետո վկայակոչում միջազգային պրակտիկան ու օրենքը, որ սեփականություն ունեցող անձն իրավունք չունի դառնալու պատգամավոր: Հիշեցմանը, որ Հայաստանում այդպիսիք շատ են, Ռաֆիկ Պետրոսյանը ոչինչ չասաց եւ խորհուրդ տվեց՝ ազնիվ դաշտ ստեղծեն այն մարդիկ, ովքեր իրենց վարքագծով կարող են ազնվության օրինակ հանդիսանալ: Այս խոսքերով, ինչպես ինքն ասաց, ոչ թե Կարապետիչին նկատի ուներ, այլ՝ ընդհանուր: Ընդհանուրից մասնավորին անցնելով էլ Ռաֆիկ Պետրոսյանին ԺԿ նախագահն անվանեց «Ձյունանուշիկ»: Հանրապետական պատգամավորի դիտարկմանը, որ Ձյունանուշիկը պատկանում է իգական սեռին, Կարապետիչը սարկազմով ասաց, որ նկատի ուներ... մաքրությունը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Վիվասել-ՄՏՍ». HSPA տեխնոլոգիայի հիման վրա գործող 3G ցանցը գործում է դեռ 2009-ից

Պատասխանելով լրատվամիջոցների հարցումներին՝ «Վիվասել-ՄՏՍ»-ն վերահաստատել է, որ ընկերությունը դեռեւս 2009 թվականի ապրիլի 17-ին Հայաստանի երեք քաղաքներում՝ Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում, պաշտոնապես ազդարարել է HSPA տեխնոլոգիայի հիման վրա գործող իր 3G ցանցի կոմերցիոն մեկնարկը: Այս մասին տեղեկանում ենք ընկերությունից մեզ տրամադրած մամուլի հաղորդագրությունից: Նշվում է է նաեւ, որ ավելի ուշ HSPA տեխնոլոգիայի հիման վրա գործող 3G ցանցը ընդլայնվել է, եւ «Վիվասել-ՄՏՍ»-ի կողմից 2009թ. հոկտեմբերի 27-ին հայտարարվել է Հայաստանի բոլոր մարզերում դրա կոմերցիոն մեկնարկը:

Ա. Մ.

ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄ

# Ո՞վ խաղաղության կպարտադրի Ադրբեջանին

Զայլուի մերձակայքում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ իր «տեսակետն» է ներկայացրել Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը: Ըստ այդմ, հայտարարությունները, որ արել է հայկական կողմը, գրեթե նույնությամբ կրկնել է ադրբեջանական կողմը՝ մեկնաբանությամբ, թե «Հայաստանն այսպես է դուրս գալիս փակուղուց»: Ցավալի այս իրավիճակում զավեշտի աստիճան ծիծաղելի է, որ ադրբեջանական կողմը իր խոսքում, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, նշում է, թե Հայաստանի նախագահն է իր հայտարարություններով տեղիք տվել վստահ լինելու, որ «հրաման է տրվել խախտելու հրադադարը»:

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե ադրբեջանական չինովնիկները կա՛մ ադրբեջաներեն չգիտեն, կա՛մ էլ լսողության համատարած խնդիր ունեն: Այլապես պատերազմից խոսող ու ռազմական գործողություններով սպառնացող հայտարարություններ անողի անունը գոնե ճիշտ կնշեին, քանի որ Ադրբեջանի «փոքրիկ իշխան» Ալիեւ կրտսերի բառապաշարն ու միտքն է միայն ռազմական լուծումից խոսում:

Եվ սրա կողքին տեղեկություններին չհետեւելու կամ էլ, որ ավելի ճիշտ է, հերթական սուտը թելելու պատճառով ադրբեջանցի չինովնիկները մոռանում են, որ Հայաստանը որեւէ պարագայում չի բարձրացրել հակամարտության ուժային լուծման ընդունելի լինելու հարցը, այլ, ինչպես եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, բազմիցս խոսել է խաղաղ լուծման ընդունելիության մասին:

Ադրբեջանի ՊՆ հաղորդագրության մեջ նաեւ ասվում է, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պետք է «ուժեղացնեն ճնշումը Հայաստանի վրա, հակառակ դեպքում շփման գծում տեղի ունեցող բախումները կարող են, վերջնական արդյունքում, հանգեցնել պատերազմի տարածաշրջանում»:

Եթե մեր տարածաշրջանի գոնե մեկ կարեւոր խաղացող ժամանակին ու տարբեր առիթների դեպքում պատերազմից խոսող Ադրբեջանին սթափեր լռել ու հանդարտվել, լկտիության այս աստիճանն ունեցող կեղծիքները չէին դառնա առօրեական: Իսկ կրկին հնչող սպառնալիքը, թե Ադրբեջանը կգնա պատերազմի, պետք է որ պարտավորված միջազգային կառույցների համար հստակ ազդակ լինի՝ Ադրբեջանին «խաղաղության պարտադրելու համար»: Բայց ո՞վ...

Ա. Հ.

# «Եթե պատերազմ սկսվի, եզդի ժողովուրդը կկանգնի հայի կողքին»



**Հունիսի 18-ին ԼՂՀ տարածքում ադրբեջանական դիվերսիոն խմբի իրականացրած վայրագությունը, երբ 4 հայ զինվոր զոհվեց, Համայն աշխարհի եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը բնութագրում է անմարդկային արարք: «Նրանք թուրք են, նույն ցեղապտան ցեղից, որ շարունակում են մորթել, սպանել: Հայ զինվորների մահը մեծ ողբերգություն է, եզդի ժողովուրդը խոնարհվում է նրանց շիրիմների առաջ», ասաց նա:**

**Վկայակոչելով պատմությունը՝ Ազիզ Թամոյանը հիշեցնում է, որ խորհրդային կարգերի փլուզումից հետո շուրջ երկու տասնյակ պետությունների օրինակով անկախություն ստացավ նաեւ Ղարաբաղը: «Դա հայկական հող է, ուր կան բազմաթիվ սրբավայրեր: Ադրբեջանի ղեկավարն այս ամենն անում է իր համար, իր աթոռի համար, նա իր ժողովրդի մասին չի մտածում»:**

**Ընդգծելով, որ 500 եզդի իր հրամանատարությամբ մասնակցել է ղարաբաղյան պատերազմին, Թամոյանը հավաստիացրեց, որ 60.000 բնակիչ ունեցող եզդի համայնքը հայ ժողովրդի բարեկամն է եւ պատրաստ է աջակցել: «Մենք եղել ենք ու կլինենք եղբայր հայերի կողքին: Եզդիները ձեզ հետ են: Թո՛ղ կրտսեր Ալիեւն իմանա. եթե նորից պատերազմ սկսվի, եզդի ժողովուրդը կկանգնի հայի կողքին եւ կպայքարի արդարության համար»:** Հ. Հ.

# 10 օրով կդադարեցվի երթեւեկությունը

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 34-րդ կիլոմետրում (Ձորագետ գյուղի մոտ) փլուզված հենապատի եւ հողային պաստառի վերականգնման շինարարական աշխատանքների ընթացքում երթեւեկության անվտանգության ապահովման նպատակով հունիսի 22-ից, ժամը 9:00-ից 10 օրով կդադարեցվի ավտոտրանսպորտային երթեւեկությունը:**

**Հաղորդագրության մեջ նշված է, որ միջպետական այդ ճանապարհահատվածի վերականգնման ընթացքում սահմանվել են տրանսպորտային երթեւեկության այլընտրանքային երթուղիներ հետեւյալ ուղղություններով՝ Երեւանից Վրաստանի սահման (Բագրատաշեն) ուղեւորվելու համար կգործի Երեւան-Սեւան-Դիլիջան-Իջեւան-Նոյեմբերյան-Բագրատաշեն երթուղին, իսկ Վանաձորից Վրաստանի սահման (Բագրատաշեն) ուղեւորվելու համար՝ Վանաձոր-Դիլիջան-Իջեւան-Նոյեմբերյան-Բագրատաշեն երթուղին:** Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

| | |
|---|---|
| Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ | / հեռ 521635 |
| Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ | / հեռ 529221 |
| Հաշվապահութիւն (գովազդ) | / հեռ 582960 |
| Լրագրողների սենեակ | / հեռ 581841 |
| Համակարգչ. ծառայութիւն | / հեռ 582483 |
| *Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* | / հեռ 529353 |

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 22/06/2010 21:36 Page 1





# Անցուդարձ

## Սեւանը՝ հարատեւ խնդիրների առանցքում

«Սեւանա լճի պահպանմանը, վերականգնմանը, օգտագործմանն ու բնականոն զարգացմանն ուղղված միջոցառումները շարունակվում են», երեկ «Նովոստի» կենտրոնում ասաց ՀՀ նախագահին առընթեր Սեւանա լճի խնդիրներով զբաղվող հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Մովսիսյանը**:

Օրենքով սահմանված է, որ Սեւանի մակարդակը պետք է բարձրանա մինչեւ 1903,5 մ: Այդ նիշին պահպանվելով՝ մենք Սեւանում կունենանք 8 մլրդ խմ լրացուցիչ ջուր: 1903,5 մ նիշին, ըստ բանախոսի, նորմալ կլիմայական պայմաններում Հայաստանը կհասնի 2029 թվականին: Վ. Մովսիսյանը տեղեկացրեց, որ հանրապետության տարածքում այսօր ունենք 79 ջրամբար, որոնցում կա ընդամենը 1 մլրդ խմ ջուր, եւ դրանից 275 միլիոնն Ախուրյանի ջրամբարում Թուրքիայի մասնաբաժինն է: 79 ջրամբարում զուտ հայկական ունեցվածքը կազմում է 750-770 միլիոն խմ:

«Եթե ուզում ենք 8 մլրդ խմ ջուր կուտակել ոչ թե Սեւանում, այլ հանրապետության ուրիշ տարածքներում, ապա պետք է կառուցենք շուրջ 700 արհեստական ջրամբար, ինչի համար կծախսվի առնվազն 250 միլիարդ դոլար», ասաց Վլադիմիր Մովսիսյանը: Լրացուցիչ ջրամբարները ուղղակի կփրկեն Սեւանը, իսկ լճի մակարդակն անհրաժեշտ է բարձրացնել միայն մաքուր ջուր ունենալու պայմանով:

Սեւանի մակարդակի բարձրացման կապակցությամբ դեռ անցյալ տարի մշակվել եւ ՀՀ նախագահին ներկայացվել էին շուրջ 50 միջոցառումներ, որոնցից 7-ն արդեն իրականացվել են: Ըստ բանախոսի՝ մնացած 43 խումբ միջոցառումների համար պահանջվելու է ավելի քան 44 մլրդ դրամ:

Այսօրվա դրությամբ Սեւանի մակարդակի բացարձակ նիշը կազմում է 1900 մ եւ 1 սմ: Կլիմայական շեղումների՝ տեղումների հետեւանքով այսօր Սեւանի մակարդակը 67 սմ բարձր է, քան անցյալ տարի նույն օրը, իսկ այս տարվա հունվարի մեկի համեմատությամբ բարձրացել է 78 սմ: Լճի մակարդակը բարձրացել է նաեւ Սեւանի թունելի վթարային հատվածների շինարարությունը դադարեցնելու հետեւանքով: «Անցյալ տարի Արփա-Սեւան թունելով Սեւան էր տեղափոխվել 202 միլիոն խմ ջուր, իսկ այս տարվա հինգուկես ամիսների ընթացքում արդեն 182 միլիոն խմ», հավելեց Վ. Մովսիսյանը:




Սեւանի մակարդակի նման բարձրացումն առաջ է բերել մի շարք խնդիրներ: Ներկայումս ջրի մեջ են գտնվում Երանոսի եւ Աստղաձորի տրանսֆորմատորային ենթակայանները իրենց էլեկտրահաղորդման գծերով: «Արդեն համաձայնություն է ձեռք բերվել հայկական բաշխիչ ցանցերի հետ, եւ 2 ենթակայաններն էլ այս տարի բարձրացվելու են», ասաց բանախոսը:

Պակաս հրատապ չեն անտառների ու ճանապարհների հետ կապված խնդիրները: Վ. Մովսիսյանի խոսքով՝ ջրածածկ են լինելու 3393 հա անտառներ, որից 867 հա կազմող անտառներն արդեն ջրի մեջ են: Ջրածածկ անտառները հնարավոր է մաքրել հատուկ սարքերով, որոնք ձեռք բերելու համար բանակցություններ են տարվում Ֆինլանդիայի ձեռնարկությունների հետ: «Մեր հաշվարկներով՝ այդ սարքավորումները ձեռք կբերվեն մինչեւ սեպտեմբերի վերջ», ասաց բանախոսը: Նրա խոսքով՝ այսօրվա դրությամբ ճանապարհային խնդիրներ ունենք, օրինակ, Կարճաղբյուր գյուղի մոտ, որտեղ ափը ողողվել է, եւ ճանապարհը ենթակա է փլուզման: «Այնտեղ շուտով սկսվելու են ամրացման աշխատանքներ, որի համար կառավարությունը հատկացրել է 42 միլիոն դրամ», ասաց Վ. Մովսիսյանը:

Սեւանի մակարդակի բարձրացումով, բնականաբար, խնդիրներ են առաջացել՝ կապված շենքերի եւ շինությունների հետ: Այդ գոտում 1905 մ նիշից ներքեւ գտնվում են 1697 շենքեր եւ շինություններ, որոնցից միայն 481-ն ունեն պետական գրանցում: Շենքերն ու շինությունները կամ պետք է տեղափոխվեն, կամ քանդվեն:

Ասուլիսի վերջում բանախոսը տեղեկացրեց, որ պետությունն այս տարվա բյուջեով 250 մլն դրամ է հատկացրել անտառների մաքրման եւ 592 մլն դրամ՝ ճանապարհների կառուցման համար:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Սեմնեբին «շփոթում է» բառեր ընտրելու...

*1-ին էջից*

**Դիտարկմանը, թե ադրբեջանական հարձակումը տեղի է ունեցել Սարգսյան-Ալիեւ-Մեդվեդեւ հանդիպումից անմիջապես հետո, իսկ Հայաստանի արտգործնախարարը «սադրիչ գործողություն» է որակել տեղի ունեցածը, Սեմնեբին գերադասեց արձագանքել առանց գնահատականներ տալու՝ շեշտելով, թե չի ցանկանում պատճառների մասին խոսել, քանի դեռ «տեղեկությունները երկրորդ աղբյուրից են ստացված»: Էդվարդ Նալբանդյանի գնահատականի վերաբերյալ եվրոպացի պաշտոնյան ասել է, թե «բառերի ուշադիր ընտրությունը ակնհայտորեն օգտակար կլինի բանակցությունների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու առումով»:**

**Դիվանագիտությունը թույլ չի՞ տալիս, թե՞ Սեմնեբին անտեղյակ է կամ չունի ճշտված տեղեկություններ, որ ադրբեջանական կողմը բառերի ընտրության հարցում իրապես որեւէ խտրականություն չի դնում: Ուժի կիրառման սպառնալիքներով հայտարարությունների պարագայում ինչպե՞ս է ստացվել, որ ոչ Սեմնեբին, ոչ էլ ուրիշները խոսք անգամ չեն ասում թշնամանք չսերմանելու համար այդքան էական նշանակություն ունեցող նորմալ բառապաշարի կարեւորության մասին:**

**Ավելին, երբ Ադրբեջանը ռազմական բյուջեն հասցնում է 1,5 մլրդ դոլարի ու նախատեսում է զենքի արտադրություն հիմնել լրջագույն հիմքերով, Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կամ էլ որեւէ այլ՝ «խաղաղությամբ մտահոգ» կազմակերպություն ու պետություն չեն խոսում դրա դեմ, չեն դատապարտում այնպես, որ հստակ լինի, թե ինչն է այդ դատապարտման հիմքում:**

**Որպես կանոն մի քանի բառ ասում ու բավարարվում են իրենց «խաղաղասիրական» նկրտումների արտահայտությամբ, ինչը հերթական անգամ արեցին նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: ԵԱՀԿ պաշտոնական կայքէջի համաձայն, ԵԱՀԿ Մխ համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա) եւ Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ) երկուշաբթի ուշ երեկոյան խստորեն դատապարտել են ուժի կիրառումն ու ափսոսանք հայտնել զոհերի կապակցությամբ:**

**Համանախագահները, Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների, եւ չգիտես ինչու՝ ոչ Ղարաբաղի, համապատասխան կառույցների տեղեկացման հիման վրա հայտարարում են. «Այս միջադեպը 1994թ. հրադադարի համաձայնագրի անընդունելի խախտում է եւ հակասում է կողմերի ստանձնած պարտավորությանը՝ զերծ մնալ ուժի կիրառումից կամ դրա կիրառման սպառնալիքներից»:**

**Ընդգծելով, որ միջադեպը տեղի է ունեցել պետերբուրգյան եռակողմ՝ Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան նախագահական հանդիպումից անմիջապես հետո, համանախագահները հայտարարությամբ նշում են, որ ռազմական ուժի կիրառումը, հատկապես այս պահին, կարելի է դիտվել միայն որպես «խաղաղ գործընթացը վնասելու փորձ»: Ուստի համանախագահները կողմերին կոչ են անում զսպվածություն ցուցաբերել եւ իրենց երկրների բնակչությանը նախապատրաստել խաղաղության, այլ ոչ պատերազմի: «Խաղաղ բանակցությունների միջոցով հակամարտության կարգավորումն այլընտրանք չունի, եւ պատերազմն էլ չի կարող դիտվել որպես լուծման տարբերակ», ասվում է հայտարարության մեջ:**

**ԵԱՀԿ գործող նախագահ, Ղազախստանի պետքարտուղար եւ արտաքին գործերի նախարար Կանատ Սաուդաբաեւը, իր հերթին, «լուրջ մտահոգություն է հայտնել» Ղարաբաղի շփման գծում հունիսի 18-ի լույս 19-ի միջադեպի առնչությամբ՝ կոչ անելով ձեռնարկել միջոցներ հետագայում նման միջադեպերը կանխարգելելու համար:**

**Սակայն թերեւս ամենաուղղակի դատապարտման խոսքեր է հնչեցրել ԱՄՆ կոնգրեսական Ֆրենկ Փալոնը, որի տարածած հաղորդագրության համաձայն, կոնգրեսականը ամենախիստ կերպով դատապարտում է տեղի ունեցածը, ընդգծելով, որ «Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծից ներս թափանցելու փորձը անընդունելի սադրանք է եւ փորձ՝ կրկին սանձազերծելու հակամարտությունը»:**

**Հայտնելով իր ցավակցությունը զոհերին՝ Փալոնը նշել է, որ պետերբուրգյան եռակողմ հանդիպմանը հաջորդելու պատճառով հարձակման այս փորձերն առավել աղաղակող են դառնում: Կոնգրեսականը ԱՄՆ կառավարությանը կոչ է արել սահմանափակել որեւէ տեսակի ռազմական աջակցություն Ադրբեջանին: «Մենք չենք կարող դադիներ կրել, երբ Ադրբեջանը օգնություն է քաղում իր ագրեսիվ հայտարարություններից ու մասնակցում բռնությամբ ուղեկցվող հարձակումների», ասել է ԱՄՆ կոնգրեսականը:**



## Վրաստանի «սեւ ցուցակում» է հայտնվել նաեւ Սեւակ Արծրունին

**Վրացական սահմանապահները թույլ չեն տվել Սեւակ Արծրունուն ջավախահայության խնդիրներով ԱՄՆ դեսպանատան աշխատակիցների հետ Թբիլիսիում նախատեսված հանդիպման համար անցնել Վրաստանի սահմանը:**

**Մարտի 19-ին Ջավախահայության իրավունքների համակարգող խորհուրդը բաց նամակ էր հրապարակել, որ ներկայացրել է նաեւ «Ազգը», հասցեագրված Հայաստանում ԱՄՆ դեսպան տկն Մ. Յովանովիչին: Նամակում ներկայացված էին այն անճշտությունները, որոնք առկա են ԱՄՆ պետքարտուղարության մարդու իրավունքների 2010 թ. զեկույցում ջավախահայության հիմնախնդիրների եւ ջավախահայ քաղաքական գործիչ, քաղբանտարկյալ Վահագն Չախալյանի գործի վերաբերյալ:**

**Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը բաց նամակը փոխանցել էր Վրաստանում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչություն: Մայիսի 17-ին համակարգող խորհրդի ներկայացուցիչները հրավիրվել են Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն: Այստեղ նրանց է հանձնվել Վրաստանում ԱՄՆ դեսպանի պատասխանը, որով պրն Ջոն Բասսը խորհրդի ներկայացուցիչներին հրավիրում էր Թբիլիսի ջավախահայության խնդիրները քննարկելու:**

**Ըստ հետագայում ձեռք բերված պայմանավորվածության, հունիսի 21-ին համակարգող խորհրդի ներկայացուցիչներ Սեւակ Արծրունին եւ Ռոբերտ Թաքոյանը ԱՄՆ դեսպանատան քաղաքական-տնտեսական բաժնի ղեկավար տկն Ջուլի Ֆիշերի հետ հանդիպման նպատակով մեկնել են Թբիլիսիի ուղղությամբ՝ այդպես էլ չհասնելով նշանակված հանդիպմանը: Հայ-վրացական սահմանի անցակետում, ըստ «Երկիր» միության տեղեկացման, վրացական սահմանապահները, չներկայացնելով որեւէ պատճառաբանություն, թույլ չեն տվել Սեւակ Արծրունուն մտնել Վրաստանի տարածք:**

**ԱՄՆ դեսպանատան աշխատակիցների հետ հանդիպմանը մասնակցել է միայն Ռոբերտ Թաքոյանը, որը ներկայացրեց միջադեպի մանրամասները, ինչպես նաեւ հանձնել համակարգող խորհրդի՝ ԱՄՆ կառավարությանը հասցեագրված նամակը ջավախահայության խնդիրների լուծման եւ Վահագն Չախալյանի ազատ արձակմանն ուղղված վրացական իշխանությունների հետ երկխոսության մեջ միջնորդ հանդիսանալու կոչով:**

**Հունիսի 21-ի հանդիպմանը հրավիրվել էր նաեւ համակարգող խորհրդի անդամ, ՀՀ ԱԺ պատգամավոր Շիրակ Թորոսյանը, սակայն վրացական իշխանությունները նախապես տեղեկացրել էին, որ թույլ չեն տալու նրա մուտքը Վրաստան, ինչպես արդեն իսկ գործնականում տեղի ունեցել է:**

**Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը տեղի ունեցածը գնահատում է որպես ԱՄՆ դեսպանատան հետ հանդիպման տապալմանն ուղղված վրացական իշխանությունների նպատակաուղղված փորձ: «Հայտարարում ենք, որ համապատասխան քայլեր են ձեռնարկվելու տվյալ միջադեպը առանց հետեւանքի չթողնելու համար», ասվում է «Երկիր» միության հաղորդագրության մեջ:**

**Հասկանալի է, որ Վրաստանը այս կերպ է վերաբերվում ու թերեւս վերաբերվելու բոլոր նրանց, ովքեր խոսում են այդ երկրում հայերի խնդիրներից: Եվ, ինչպես տեղեկացրել է «Ազգը», սա առաջին դեպքը չէ, երբ ջավախահայության խնդիրներով հետաքրքրվողներին առանց պատճառաբանության թույլ չեն տալիս մտնել Վրաստան: Ըստ էության, Վրաստանում հայաստանցի գործիչների առնչությամբ գործում է «սեւ ցուցակ», որի հետագա մասնակիցների մասին ամենայն հավանականությամբ չի ուշանա «տեղեկատվությունը»:**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Foreign Policy. Հայաստանը՝ տարածաշրջանի ամենագործունակ երկիր

Ամերիկյան Foreign Policy ամսագրում ամեն տարի հրապարակվող անգործունակ երկրների ցուցակում Հայաստանը զբաղեցնում է 101-րդ տեղը: News.am կայքէջի տեղեկացմամբ, երրորդ տարին անընդմեջ առաջին հորիզոնականը բաժին է հասնում Սոմալիին: «Ոչ հուսալի» երկրների ցանկում են Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Սուդանը, Զիմբաբվեն, Աֆղանստանը, Պակիստանը եւ այլ երկրներ:

Անգործունակ երկրների ցուցակում Ադրբեջանը զբաղեցնում է 55-րդ, Վրաստանը 37-րդ տեղերը: Թուրքիան գտնվում է 89-րդ, Ռուսաստանը 80-րդ, Իրանը 32-րդ տեղերում:

Ամենակայուն երկրները, ամսագրի կարծիքով, 2010-ին հանդիսանում են Ֆինլանդիան, Շվեդիան եւ Նորվեգիան, որը զբաղեցնում է վերջին 177-րդ տեղը: ԱՄՆ-ը 158-րդն է

Այս կամ այն երկրի գնահատականը տրվում է ելնելով մի շարք գործոններից. ժողովրդագրական ճնշում, արտագաղթ, տնտեսական անհավասարության մակարդակ, պետության քրեականացվածություն, պետության կողմից տրամադրվող ծառայությունների քանակ, օրինապահություն եւ մարդու իրավունքների հարգանք եւ այլն:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հուլիսին «Յունիբանկ»-ը կգործարկի սեփական պրոցեսինգային կենտրոնը

«Յունիբանկ»-ի կողմից իրականացվող սեփական պրոցեսինգային կենտրոնի գործարկման նախագիծը մոտենում է ավարտման փուլին: Պրոցեսինգային կենտրոնի գործարկումը բանկը նախատեսել է 2010թ.-ի հուլիսին: Սեփական կենտրոնի շահագործումը թույլ կտա բանկին էապես մեծացնել քարտերի էմիսիայի ծավալը եւ հաճախորդներին առաջարկել վարկային քարտերի առավել գրավիչ պայմաններ: Նոր, ժամանակակից պրոցեսինգային կենտրոնի հզորության օգտագործումը միաժամանակ կբարձրացնի անվտանգության մակարդակը եւ կբարելավի քարտերի սպասարկման որակը:

Սեփական պրոսեցինգային կենտրոնի կառուցման որոշումը «Յունիբանկ»-ի կողմից ընդունվել էր մեկ տարի առաջ: Այդ նախագծի իրականացմանն ուղղված ներդրումների ծավալը կազմել է ավելի քան 1 մլն դոլար:

AZG NEW PDF.qxd 22/06/2010 21:37 Page 1



# Եթե եկեղեցու բացումը սպառնում է թուրքական պետության ամբողջականությանը

## *Անհանդուրժողականությունն էլ պետք է համարվի ոչ մահմեդականների նկատմամբ թուրքական «հանդուրժողականության» առանձնահատկությունը*

Վերջին շրջանում Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունը ձեռնամուխ է եղել տարվա մեջ մեկ օր ժամերգության համար հայերի, հույների եւ ասորիների մեկական եկեղեցիներ բացելուն, որոնցից թերեւս առաջինը Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին է: Նախարարության այս նախաձեռնությունը բուռն հակազդեցություն է առաջացրել ընդդիմության շրջանում: Դրան հատկապես առարկել է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության փոխնախագահ Իսմեթ Բույուքաթմանը:

Նա, «Էթիկհաբեր» կայքէջի վկայությամբ, հարցում է ներկայացրել Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահություն, պահանջելով, որ դրան գրավոր պատասխանի մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Էրթուղրուլ Գյունայը: Հարցապնդման մեջ Բույուքաթմանը հետեւյալ կերպ է պատճառաբանել դրա անհրաժեշտությունը.

«Վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունների եկեղեցական նախաձեռնությունները վերջ չունեն: Վերջին անգամ օգոստոսի 15-ին մեկ օրով ժամերգության համար է բացվել Տրապիզոնի հունական Սումելա վանքը: Անցյալ տարի վանքը ժամերգության համար բացելու քրիստոնյաների նկրտումը խափանել էր Սումելա թանգարանի տնօրեն տկն Նիլգյուն Յըլմազերը: Իսկ այս տարի կառավարությունը պաշտոնապես արտոնել է բացումը:

Օգոստոսի 15-ը պոնտական պետության կործանման ամսաթիվն է: Հետեւաբար միանգամայն տրամաբանական է, որ ժամերգության համար քրիստոնյաները հենց այդ օրն ընտրեցին: Մշակույթի նախարարությունը պետք է գիտակցի այդ օրվա խորհուրդն ու ըստ այդմ որոշում ընդունի»:

Ինչ վերաբերում է նախարար Գյունային ուղղված հարցերին, ապա դրանք հետեւյալն են.

- «Օսմանյան զորքերը 1461-ի օգոստոսի 15-ին են գրավել Տրապիզոնը: Ճի՞շտ է, որ Սումելա վանքը ժամերգության բացելու համար գիտակցաբար հենց օգոստոսի 15-ն է ընտրվել:

- Նախարարությունը չի մտածո՞ւմ օգոստոսի 15-ի փոխարեն այլ ամսաթիվ ընտրել:

Ի՞նչ են մտածում Պոնտոսի հունական պետության կործանման օրը՝ օգոստոսի 15-ը իբրեւ ժամերգության օր ընտրողները, նրանք դրանով արդյոք չե՞ն ձգտում հռչակել Բյուզանդիայի վերականգնումը:

- Ժամերգության համար մինչ այդ բացված Վանի Աքդամար (Աղթամար) եւ Ալեքսանդրետի ասորական եկեղեցիներից հետո ժամերգության արտոնություն ո՞ր եկեղեցիներին է տրվելու: Հնարավո՞ր է, որ ժամերգության համար բացվի նաեւ Այա Սոֆիան:

- Նախարարությունը չի՞ մտածում մայիսի 29-ին՝ Ստամբուլի նվաճման օրը նամազի համար մահմեդական հավատացյալների առջեւ բացել Այա Սոֆիան»:

Ինչո՞ւ մահմեդականների, որովհետեւ 1453-ի մայիսի 29-ին, երբ Մեհմեդ Երկրորդը գրավեց Կ. Պոլիսը, Այա Սոֆիան մզկիթի էր վերածել: Քաղաքի փառահեղ մյուս եկեղեցիներն արժանացել էին նույն ճակատագրին կամ էլ՝ հիմնահատակ ավերվել: Ինչ վերաբերում է Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու տարվա մեջ մեկ օր՝ ընդամենը մի քանի ժամով ժամերգության համար բացմանը, ապա հիշեցնենք, որ 1914-ին, այն էլ՝ թուրքական տվյալներով, ներկայիս Թուրքիայի ասիական հատվածում գործում էին 2 հազար 538 հայկական եկեղեցի եւ 451 վանք:

1915-23 թթ. թուրք մարդասպանները իթթիհատական թե քեմալական, բնաջնջել են արեւմտահայությանը: Բնաջնջմանը հետեւել է երկրի տարածքում հայկական հետքի վերացումը: Մինչեւ 1974 թ. ցեղասպան իթթիհատականների իրավաժառանգորդները հասցրին հայկական 2 հազար 989 եկեղեցիներից եւ վանքերից 2 հազար 737-ը քանդել, մնացած 252-ն անտերության մատնեցին, որ քանդվի:

Պետականորեն քանդման էր ենթակա նաեւ Աղթամարի Սուրբ Խաչը, միայն վերջին պահին կասեցվեց քանդումը: Թերեւս 2 հազար 989 եկեղեցիներից եւ վանքերից միակն է, որ շարունակում է կանգուն մնալ թեկուզ առանց խաչի, եւ վարչապետ Էրդողանի իշխանությունները տարվա մեջ մեկ օր թույլատրել են ժամերգություն կատարել Սուրբ Խաչում: Իսկ, ի դեմս Ազգայնական շարժում կուսակցության, թուքական ընդդիմությունն առարկում է, դեռ ժամերգությունն էլ դավադրություն է համարում միտված թուրք ազգի միասնականության եւ թուրքական պետության ամբողջականության դեմ:

Առարկումն անհանդուրժողականության դրսեւորում է: Ըստ երեւույթին այդ անհանդուրժողականությունն էլ պետք է համարվի ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ թուրքական դարավոր «հանդուրժողականության» առանձնահատկությունը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Անկողմնակալությունը Ղազախստանի «նախընտրական խոստո՞ւմն» էր՝ նախքան ԵԱՀԿ նախագահության ստանձնումը

Երբ անցյալ տարի ԱՊՀ երկրներից առաջինը Ղազախստանը ստանձնեց ԵԱՀԿ-ում նախագահությունը, որոշ հույսեր արթնացան՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ: Նախագահ Նուրսուլթան Նազարբաեւն անձամբ հայտարարեց, որ «Ղազախստանը՝ առավել քան որեւէ այլ երկիր, լինելով մոտ հակամարտող երկրներին, քաջատեղյակ է կոնկրետ ղարաբաղյան հակամարտությունից եւ ամեն ինչ անելու է հակամարտության լուծման համար՝ ԵԱՀԿ-ում իր նախագահության ժամկետում»:

Տարածաշրջան այցելած ղազախ արտգործնախարար Կանատ Սաուդաբաեւը ինչպես Երեւանում՝ հանդիպելով Հայաստանի եւ ԼՂՀ իշխանությունների ներկայացուցիչներին, այնպես էլ Բաքվում՝ ունենալով համապատասխան հանդիպումներ, հայտարարեց, որ ԵԱՀԿ-ն՝ «Ղազախստան նախագահով», ամեն ջանք կգործադրի խնդիրը լուծելու: Սակայն խնդրի լուծումը, փաստորեն, թյուրքախոս Ղազախստանը բավական միակողմանի է պատկերացնում. նախ կրկին վերհիշենք Դուշանբեի հռչակագիրը, որտեղ, ի թիվս այլ մուսուլմանական երկրների, Ղազախստանը նույնպես որեւէ առարկությամբ հանդես չեկավ՝ Հայաստանին ագրեսոր ճանաչելու որոշման դեմ: Բացի այդ, Աստանա սկսեցին պարբերաբար այցելել Մինսկի խմբի համանախագահ դառնալու մեծ երազանք ունեցող Թուրքիայի ամենատարբեր մակարդակի պաշտոնյաներ, նույնիսկ նախագահ Աբդուլլահ Գյուլը: Բնականաբար Ղազախստանի մայրաքաղաքում թուրք պաշտոնյաները խոսեցին Ղարաբաղի հարցի մասին, թե պետք է շուտափույթ լուծում, թե շատ կարեւոր է, որ այդ լուծումը գտնվի ամենամոտ ապագայում, իսկ ասելով «ամենամոտ ապագա»՝ թերեւս նկատի է առնվում թյուրքախոս Ղազախստանի նախագահության ժամկետը ԵԱՀԿ-ում:

Այս ամենին զուգահեռ, Աստանան շարունակում է անկողմնակալության երաշխիքներ տալ, սակայն դրանք կրում են բացառապես հայտարարությունների տեսք: Իր գործողություններում, սակայն, ԵԱՀԿ գործող նախագահող երկիրն առիթը բաց չի թողնում Անկարային ներս խցկելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթաց: Այսպես՝ այս օրերին Աստանայում է հերթական թուրք բարձրաստիճան պաշտոնյան. արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն: Հունիսի 21-ին վերջինս հանդիպեց իր ղազախ գործընկերոջը՝ Կանատ Սաուդաբաեւին: Հանդիպումից հետո Սաուդաբաեւը նշել է. «Բնականաբար մենք չէինք կարող շրջանցել Լեռնային Ղարաբաղի հարցը, քանի որ որպես ԵԱՀԿ գործող նախագահ, լուրջ ջանքեր ենք գործադրում, այսպես կոչված, սառեցված հակամարտությունների լարվածությունը նվազեցնելու ուղղությամբ, եւ Թուրքիայի մասնակցությունը դրանց կարգավորման հարցում շատ կարեւոր է»: Ի պատասխան Դավութօղլուն նշել է. «Մենք քննարկեցինք այն ջանքերը, որոնք անհրաժեշտ են ղարաբաղյան հակամարտության լարվածությունը թուլացնելու համար: Կարծում եմ՝ այս տարին եվրասիական տարածքում կարելի է անվանել Ղազախստանի եւ Թուրքիայի տարի: Երկու եղբայրական երկրները շարունակելու են համատեղ ջանքերը կայունության, խաղաղության եւ հանգստության համար», եզրափակել է Դավութօղլուն:

Տարօրինակ է, որ ԵԱՀԿ գործող նախագահող երկրի արտգործնախարարը ղարաբաղյան հակամարտությունը համարում է «սառեցված»: Այս վերջին որակավորումը տալիս են այն հակամարտություններին, որտեղ, նախ, չկան ռազմական գործողություններ, երկրորդը՝ բանակցային գործընթացը մեծ ընդմիջումներով է առաջ ընթանում կամ առհասարակ չի ընթանում: Իսկ Ղարաբաղի պարագայում՝ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով կան պարբերական շփումներ՝ հակամարտող կողմերի միջեւ, եւ, ցավոք, կան նաեւ շարունակական ռազմական գործողություններ՝ հրադադարի պայմանների հաճախակի խախտումներ՝ հարեւան երկրից: Հետեւաբար՝ անվանել ղարաբաղյանը «սառեցված» հակամարտություն, մեղմ ասած, կնշանակի՝ հարցի անտեղյակություն, որը, անշուշտ, պատիվ չի բերում ԵԱՀԿ գործող նախագահողին: Բացի այդ, Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահները, այդ երկրների տարբեր պաշտոնյաներ չեն հոգնում կրկնելուց, որ ղարաբաղյան հակամարտությամբ «զբաղվում է» բացառապես Մինսկի խումբը, հետեւաբար Ղազախստանի հրավերը Անկարային չի բխում ո՛չ Ռուսաստանի, ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ էլ Ֆրանսիայի շահերից: Ինչ հետեւանքներ կունենա Ղազախստանի նմանօրինակ «կառուցողականությունը», ցույց կտա ժամանակը, սակայն հիմա արդեն կարելի է արձանագրել, որ ԵԱՀԿ նախագահող երկրի կարգավիճակում Աստանայի քայլերն արդյունավետ չեն խիստ միակողմանի լինելու պատճառով:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ

# Ուշադիր լսենք ադրբեջանցիներին

Ադրբեջանցի քաղաքական գործիչները, քաղաքագետները կամ տարբեր մասշտաբի գործիչները անկեղծորեն արտահայտում են իրենց կարծիքը ղարաբաղյան հարցի եւ Հայաստանի մասին: Եվ շատ կարեւոր է, որ այդ անկեղծությունը լուսաբանվի հայկական մամուլով, քանի որ ցույց է տալիս ադրբեջանցիների իրական նպատակները, եւ պարզ է դառնում, որ փոխզիջումների մասին խոսողները տեղյակ չեն կամ չեն ցանկանում լսել այս ամենը: Մասնավորապես, Ադրբեջանի ժողովրդա-առաջադիմական կուսակցության ղեկավար **Հուսեյն Ալիյարլին** հայտարարել է. «Միամիտ են նրանք, ովքեր կարծում են, թե օկուպացված տարածքների մի մասի հանձնումով հնարավոր կլինի հասնել խաղաղության»: Ադրբեջանական կողմի համար, ըստ ադրբեջանցի քաղաքական գործչի, «խոսքը բոլոր տարածքների, ներառյալ Լեռնային Ղարաբաղի մասին է»:

Վերը նշված ադրբեջանցի քաղաքական գործիչը առաջինը չէ, որ անկեղծանում է եւ հայտարարում, որ տարածքների զիջումով խաղաղություն չի հաստատվի: Գաղտնիք չէ նաեւ, որ ադրբեջանցիները միշտ էլ ձգտել են ցամաքային կապ հաստատել Թուրքիայի հետ եւ այդ հարցում Հայաստանը դիտում են որպես խոչընդոտ: Այս թեմայով նույնպես անկեղծանում է Հուսեյն Ալիյարլին՝ նշելով, որ «ոչ թե մենք ենք շրջափակել Հայաստանը, այլ վերջինս է փակել հաղորդակցության մեր կապը Թուրքիայի հետ»: Նման մեկնաբանությունը եւ նման տեսակետը պատահական չեն. նավթադոլարներից հղփացած եւ ռազմական բյուջեն ավելացնելով՝ նրանք որդեգրել են Հայաստանի հետ ռազմաշունչ լեզվով խոսելու ավանդույթը, որը, ցավոք սրտի, հայկական կողմից համարժեք պատասխանի չի արժանանում: Այս իրավիճակն էլ Ադրբեջանի տարբեր տրամաչափի քաղաքական ու այլ տիպի գործիչներին հնարավորություն է տալիս Հայաստանի մասին հերթական ռազմաշունչ հայտարարություն անել եւ մեղադրանքներ ներկայացնել:

Իհարկե, կարելի էր եւ այս ամենին ուշադրություն չդարձնել, ինչպես պնդում են հայրենի որոշ պաշտոնյաներ՝ դա վերագրելով պարտված կողմի սինդրոմի, որը մարտից հետո մաս թափ տալ է հիշեցնում, կամ հին հայկական ասույթը հիշել, թե «հաչող շունը չի կծում» եւ այլն, սակայն Հայաստանի շարքային քաղաքացին, որ հետեւում է այս ամենին ու լսում Բաքվից հնչող ռազմատենչ հայտարարությունը, ապշահար հետեւում է, թե հայրենի քաղաքական գործիչները երբ համապատասխան ոգով եւ կոշտությամբ պատասխան կտան: Իսկ ամեն տեսակի բացատրությունները՝ պարտված ադրբեջանցիների հոգեմաշ վիճակի մասին, ոչ մեկին չեն բավարարում ու առանձնապես չեն հետաքրքրում: Հետեւաբար ադրբեջանցիների ռազմատենչ հերթական հայտարարությանը պետք է հետեւի հայկական կողմի կոշտ պատասխանը:

Իսկ Հուսեյն Ալիյարլի անունը կրող ադրբեջանցի մանրապճեղ քաղաքական գործչի հայտարությանը արժե անդրադառնալ միմիայն այն պատճառով, որ վերջինս անկեղծորեն խոսում է այն մասին, ինչի մասին երազում ու մտածում են այդ երկրի ողջ ղեկավարությունը եւ բնակչությունը: Այսինքն՝ տարածքների հանձնումը ոչ թե խաղաղության, այլ միայն հերթական պատերազմի կհանգեցնի տարածաշրջանում, ու միամիտ են նրանք, ովքեր հավատում են հակառակին:

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Արմենական-ՌԱ կուսակցության փոխատենապետ

# Իրանական թերթը խոսում է Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման կարեւորությունից

«Լեռնային Ղարաբաղի բնակչությանը չպետք է պարտադրել, թե որտեղ նրանք պետք է ապրեն, նրանց չպետք է զրկել ընտրության իրավունքից: Ղարաբաղի բնակչության համար անհրաժեշտ է հարմարավետ կենսապայմաններ ապահովել», նման հրապարակմամբ հանդես է եկել իրանական «Աբրար» օրաթերթը՝ «Հայացք Ղարաբաղի հակամարտությանը» վերնագրով վերլուծական հոդվածում: Իրանական պարբերականը շարունակում է, գրելով. «Ղարաբաղի խնդրում կարեւորն այնտեղ ապրող մարդկանց ճակատագրի տնօրինման իրավունքն է, որն ավելի կարեւոր է, քան պետությունները, պետական շահերից առավել կարեւոր են մարդիկ: Հետեւաբար Ղարաբաղի խնդիրը նույնպես պետք է հենց այդ մտայնությամբ եւ ճանապարհով լուծվի»:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ աշխարհի տարբեր ծայրերում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում, հիմա էլ արդեն Իրանում այսօրինակ հրապարակումները ավելի հաճախակի են դարձել. աշխարհը կարծես թե սկսում է իրազեկվել Ղարաբաղի իրական պատմությանը: Այս առումով նույն իրանական թերթը նկատում է. «Ժամանակակից աշխարհը փոփոխվում է, պետությունները մեծանում կամ փոքրանում են, եւ սա բնական գործընթաց է: Իսկ կոնկրետ ղարաբաղյան հակամարտության համար չպետք է գոյություն ունենա լուծման ռազմական ճանապարհ», եզրափակում է «Աբրարը»:

Այս վերջին պնդումը, փաստորեն, ընդունում են բոլորը՝ Հայաստանը, ԼՂՀ-ն, Մինսկի խումբը, ողջ միջազգային հանրությունը, բացի Ադրբեջանից, որը շարունակում է սպառնալ ռազմական լուծմամբ: Սակայն Բաքուն թերեւս «մոռացել» է, թե ինչ պատահեց Վրաստանին, երբ վերջինս զորք մտցրեց Աբխազիա եւ Հարավային Օսիա, Բաքվում երեւի չեն էլ զգում, որ «աշխարհը փոխվել է...»:

Հ. Ա.

AZG NEW PDF.qxd 22/06/2010 21:36 Page 1



# Հայ-ավստրիական եւ ադրբեջանա-ավստրիական

## *Առաջինում «շատ ձեռքբերումներ չկան», երկրորդում «հայերը սկանդալ են սարքել»*

Շուտով Ադրբեջան կայցելի ավստրիական բավական ընդգրկուն պատվիրակություն՝ արտգործնախարար Միխայել Շպենդելեգերի գլխավորությամբ: Այցելությունը նախաձեռնել է Ավստրիայի Տնտեսական պալատը, իսկ այցի նպատակն է «կարգավորել ավստրիական եւ ադրբեջանական ընկերությունների միջեւ եղած կապերը», ինչպես նաեւ ներկա գտնվել Բաքվում Ավստրիայի դեսպանատան բացմանը: Շպենդելեգերը կհանդիպի Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեին, արտգործնախարար Էլմար Մամեդյարովին, Ադրբեջանի Նավթի պետական ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլաեւին, իսկ Մամեդյարովի հետ հանդիպումից հետո երկու նախարարները համատեղ ասուլիս կտան: Այս այցելության մեջ, ավելի ճիշտ՝ ավստրիական պատվիրակության կազմի, առավել հետաքրքրական է մեկ այլ բան, եւ դա ամենեւին էլ «խորացող տնտեսական գործակցությունը» չէ Ադրբեջանի եւ Ավստրիայի միջեւ, մանավանդ հաշվի առնելով, որ արտգործնախարար Շպենդելեգերը մոտ ժամանակներս կայցելի նաեւ Երեւան. այդ մասին, հիշեցնենք, նշել է Հայաստանի արտգործնախարար Նալբանդյանը Profil ավստրիական ամսագրին տված հարցազրույցում՝ հավելելով, որ Ավստրիայի հետ կքննարկվեն երկկողմ հարաբերությունները խորացնելու հարցեր՝ մանավանդ որ «հայ-ավստրիական հարաբերություններում շատ ձեռքբերումներ չկան»: Ադրբեջան մեկնող Ավստրիայի պատվիրակության կազմը հետաքրքրական է այն առումով, որ այնտեղ նախատեսված էր, որ պետք է լիներ ավստրիական Der Standard թերթի լրագրող, կովկասյան տարածաշրջանի մասնագետ Մարկուս Բերնաթը, սակայն նա «Պանորամա.ամ»-ին տված հարցազրույցում նշել է. «Լինելով Կովկասի մասնագետ, նախատեսված էր, որ ես էլ պետք է լինեի Ավստրիայի պատվիրակության կազմում, սակայն երբ մեր արտգործնախարարությունը հավաքեց պատվիրակության անձնակազմի անձնագրերը եւ ներկայացրեց Վիեննայում Ադրբեջանի դեսպանատուն, արտգործնախարարությանը տեղեկացրին, որ կազմից մի հոգու չեն կարող տալ իրավունք՝ մուտք գործելու Ադրբեջան. այդ մեկը ես էի»: Բանն այն է, որ Բերնաթը դեռ 2006-ից Ադրբեջանի «սեւ ցուցակում» է. նա դեռեւս այդ տարվանից մի քանի անգամ այցելել է «Ադրբեջանի օկուպացված տարածք»՝ Ղարաբաղ: Այս կապակցությամբ ավստրիացի լրագրողը նշել է. «լրագրողները ներկայացնում են զանգվածային լրատվամիջոցներին. մենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը չենք, մենք չենք կազմում քաղաքական հռչակագրեր, եւ ես չեմ կարծում, որ իմ հոդվածները կարող են ինչ-որ կերպ ազդել Ղարաբաղում տարածքային կառավարման սկզբունքների վրա»: Այս կապակցությամբ Ադրբեջանի ԱԳՆ-ի «միակ խոսող անձը»՝ մամլո քարտուղար Էլխան Պոլուխովը հայտարարել է. «Ի՞նչ կա այստեղ զարմանալու, եթե այդ մարդն իրոք այցելել է օկուպացված տարածքներ, ուրեմն նրա մուտքը Ադրբեջան կարգելվի: Եթե ավստրիական կողմը որոշի բարձրացնել այս հարցը, մենք պատրաստ ենք քննարկել»:

Իսկ Ադրբեջանի քաղաքական եւ ինովացիոն տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Մուբարիզ Ահմեդօղլուի խոսքերով՝ ավստրիացի լրագրողների հետ նման միջադեպեր հաճախ են պատահում. «Ես առհասարակ կարծում եմ, որ սա հայկական սադրանք է. այդ լրագրողին հայերի միջամտությամբ են ընդգրկել պատվիրակության կազմ, քանի որ հայերը, վստահ լինելով, որ Բաքուն թույլ չի տա Բերնաթի մուտքը Ադրբեջան, ցանկանում են հասնել ադրբեջանա-ավստրիական սկանդալի: Սակայն այդ հարաբերությունները չեն տուժի հայերի լարած թակարդից, դրանք հիմնված են տնտեսական կապերի ամրապնդման վրա: Մասնավորապես ավստրիական OMV նավթագազային ընկերությունը հիմնականն է «Նաբուկկո» նախագծում», ընդգծել է Ահմեդօղլուն՝ մոռանալով նշել, որ ամբողջ աշխարհը կարծես թե արդեն իսկ այդքան էլ մեծ հավատով չի նայում «Նաբուկկո»-ի իրականացմանը: Ինչեւէ, փաստենք, որ Ադրբեջանի «սեւ ցուցակը» նոր համալրումներ է ստանում, այնտեղ են մի շարք երկրների (մեծ կշիռ ունեցող երկրների-Հ. Ա.) պատգամավորներ, տարբեր գործիչներ, մտավորականներ, արվեստի գործիչներ, քաղաքագետներ: Ի դեպ, վերոհիշյալ Ահմեդօղլուն նշել է, թե «ղարաբաղյան հակամարտությունը մոտենում է ավարտին, եւ շուտով Բաքուն կարիք չի ունենա որեւէ «սեւ ցուցակի»», թերեւս Բաքվում էլ արդեն հոգնել են պարբերաբար այն թարմացնելուց, իսկ ղարաբաղյան հակամարտության մոտալուտ ավարտին Երեւանում էլ ոչ ոք դեմ չէ:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ռուս գործարարն ուզում է դառնալ «Մոնդի» գլխավոր բաժնետեր




Ռուսաստանցի գործարար Գլեբ Ֆետիսովը ֆրանսիական «Մոնդ» ազդեցիկ օրաթերթի բաժնետերերին է դիմել բաժնետոմսերի մեծամասնական փաթեթը ձեռք բերելու առաջարկով: Այդ մասին հաղորդվում է Ֆետիսովի կայքէջում:

Առաջարկված գումարը չի հրապարակվում: Հունիսի 21-ին «Մոնդը» հաղորդել էր եւս երկու առաջարկության մասին:

Թերթի հայտարարությունը վկայակոչելով՝ Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ հավակնորդներից մեկը այն կոնսորցիումն է, որն ընդգրկում է France Telecom-ի մասնաճյուղ Orange-ը, Nouvel Observateur հանդեսը եւ Prisa իսպանական հրատարակչական խումբը: France Telecom-ի ղեկավար **Ստեֆան Ռիշարի** խոսքով, ընկերությունը պատրաստ է թերթի գնման նպատակով կոնսորցիումին հատկացնել 50-60 մլն եվրո:

Երկրորդ առաջարկն արել է այն խումբը, որի մեջ մտնում են Իվ Սեն-Լորանի նախկին գործընկեր Պիեռ Բերժեն, Lazard ընկերության կառավարիչ Մաթյո Պիգասը, Ilad հեռահաղորդակցական ընկերության հիմնադիր Քսավիե Նիելը:

Ենթադրվում է, որ Le Monde-ի բաժնետերերը վերջնական որոշում կընդունեն հունիսի 28-ին: 1944թ. հիմնադրված թերթը ներկայումս ֆինանսական ճգնաժամի մեջ է: Պարտքերի մեջ խրված թերթի փրկության համար այսօր անհրաժեշտ գումարը գնահատվում է 100-150 մլն դոլար:

Գլեբ Ֆետիսովը Мой Банк-ի, ինչպես նաեւ Altimo բաժնետիրական հոլդինգի համատերն է: 2001-2009 թթ. Դաշնության խորհրդում եղել է Վորոնեժի մարզի սենատոր: Պաշտոնաթողությունից հետո սկսել է ղեկավարել «Միասնական Ռուսաստանի» գլխավոր խորհրդի նախագահությանը կից հակաճգնաժամային խումբը:

# Բրազիլիայում 1000-ից ավելի մարդ անհետ կորած է ջրհեղեղի հետեւանքով

Բրազիլիայի հյուսիս-արեւելքում հորդառատ անձրեւների եւ հեղեղումների հետեւանքով հազարից ավելի անձինք անհետ կորած են համարվում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով Ալագոասի նահանգապետ Տեոտոնիո Վիլելա Ֆիլյոյի հայտարարությունը: Նահանգապետը երկյուղ է արտահայտել, որ ամենամոտ ժամանակներս զոհերի թիվը կարող է էապես աճել:

Միայն Ալագոասում հորդառատ անձրեւների եւ սողանքների հետեւանքով զոհվել է 26 մարդ: Տասնյակ հազարավոր մարդիկ մնացել են անօթեւան: Տարածաշրջանում ավերված են բազմաթիվ տներ, խախտված է տրանսպորտային համակարգը:

Ալագոասում հայտարարված է արտակարգ դրություն: Երեկ նահանգապետի եւ երկրի նախագահ Լուիս Իգնասիու Լուլա դա Սիլվայի հանդիպման ժամանակ մշակվել է տարերային աղետի հետեւանքների վերացման գործողությունների ծրագիր:

Երկարատեւ անձրեւները կանոնավորապես հեղեղումներ են առաջացնում Բրազիլիայում: Ապրիլին տարերքից զոհվել էր մոտ 300 մարդ, տուժել էին հազարավոր ուրիշներ:



# Թուրք-իսրայելական լարվածությունը թուլանո՞ւմ է

Հունիսի 22-ին Իսրայել է ժամանել թուրք զինվորականների մեծ պատվիրակություն՝ ավարտելու Իսրայելից գնած անօդաչու հետախուզական ինքնաթիռների ընդունումը, այս մասին հաղորդում է News.am-ը՝ հղում անելով թուրքական «Զաման»-ին: Նախատեսվում է, որ թուրք զինվորականները 10-15 օր կմնան իսրայելական ռազմական բազայում՝ փորձարկելու Heron տեսակի 4 հետախուզական ինքնաթիռները եւ նրանց կայանները:

Հիշեցնենք, որ Թուրքիան Իսրայելից 180 մլն դոլար արժողությամբ 10 Heron անօդաչու ինքնաթիռ է գնել, որոնք պետք է օգտագործվեն PKK-ի դեմ: 2010-ի փետրվարի վերջին այս ինքնաթիռներից 6-ը արդեն տեղափոխվել էին Թուրքիա, եւ չնայած թուրք-իսրայելական ճգնաժամին, փաստորեն, գործարքն այնուամենայնիվ կայացավ, ինչը կարող է վկայել, որ լարվածությունը երկու «նախկին դաշնակիցների» միջեւ կարծես թե վերանում է՝ մանավանդ հաշվի առնելով, որ Իսրայելը համաձայնել է վերացնել Գազայի ցամաքային շրջափակումը: Ի դեպ, Գազայի միջադեպի անցկացվելիք քննության կապակցությամբ Իսրայելի պաշտպանության նախարար Բարաքը խնդրել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի Մունին հետաձգել դրանք. «Մոտ ժամանակներում Իսրայելը Գազայի շրջափակման վերացման ուղղությամբ նոր քայլեր կձեռնարկի, Լիբանանում արդեն մի նավ պատրաստվում է ուղեւորվել Գազա», նշել է Բարաքը:

Հ. Ա.

# Նաթանյահուն թույլատրեց շինարարությունն Արեւելյան Երուսաղեմում

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն փոխել է դիրքորոշումը եւ այլեւս չի խոչընդոտի Արեւելյան Երուսաղեմում իսրայելական ավանների կառուցմանը: Նաթանյահուի որոշումը հրապարակել է նրա քաղաքական խորհրդական Շալոմ Շլոմոն:

«Հաարեց» թերթի տվյալներով, Արեւելյան Երուսաղեմի շինարարության նորացված ծրագիրը հինգշաբթի օրը քննարկվելու է «Լիկուդ» կառավարող կուսակցության խորհրդակցությունում: «Լիկուդի» ընդդիմադիր թեւը Դանի Դանոնի գլխավորությամբ մտադիր է խոչընդոտել այդ ձեռնարկմանը եւ տարհամոզել վարչապետին ու նախարարներին:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, իշխանությունները վերահաստատել են Արեւելյան Երուսաղեմում պաղեստինյան 22 շենք քանդելու մտադրությունը: Դրանց տեղում կառուցվելու է իսրայելական զբոսաշրջության կենտրոն:

Իսրայելական ավանների շինարարությունն ապասառեցնելու որոշումը կարող է վերստին բարդացնել իսրայելա-պաղեստինյան հարաբերությունները, ինչպես նաեւ Իսրայել-ԱՄՆ հարաբերությունները: Ամերիկյան կողմը իսրայելցիներին քանիցս կոչ է արել չխորացնել պաղեստինա-իսրայելական հակամարտությունը:

Մարտի 23-ին նախագահ Բարաք Օբաման Նաթանյահուին առաջարկել էր պարտավորագիր ստորագրել Արեւելյան Երուսաղեմում նոր տների կառուցումը սառեցնելու վերաբերյալ: Երկժամյա բանակցությունն արդյունք չէր տվել. Նաթանյահուն հրաժարվել էր ստորագրել փաստաթուղթը: Երկրորդ հանդիպումը նույնպես ապարդյուն էր անցել:

# Ամերիկացիների փողերը ծառայում են թալիբների ֆինանսավորմանը

Աֆղանստանում գրոհայինների դեմ պայքարելուն հատկացվող ամերիկացի հարկատուների փողերը իրականում ծառայում են թալիբների



ֆինանսավորմանը: Այս պնդումն է արվում երեկ Կոնգրեսի կոմիտեի հրապարակած զեկուցագրում:

Ամերիկացի զինվորականները տասնյակ միլիոնավոր դոլարներ են հատկացնում աֆղանական պահակային ֆիրմաներ վարձելուն, որոնք էլ փողերը հանձնում են գրոհայիններին, նշվում է փաստաթղթում: BBC-ն հաղորդում է, որ այդ տվյալները ստացվել են կես տարի տեւած քննության շնորհիվ:

Ամերիկյան զորքերին պարեն եւ հանդերձանք տանող բեռնատարները աֆղանական ֆիրմաներին վճարել են վտանգավոր շրջաններում անվտանգ անցում ապահովելու համար: Երբ չեն վճարել, շարասյուները ենթարկվել են հարձակումների:

Նման պահակային ընկերություններից մեկը հավանաբար պատկանում է նախագահ Համիդ Կարզայի երկու հորեղբայրներին:

Զեկուցագրում նաեւ հաղորդվում է, որ ամերիկացիները բեռնատարների անցման ժամանակ ստիպված են կաշառքներ վճարել փաստորեն բոլոր պաշտոնյաներին՝ նահանգապետից մինչեւ ոստիկանապետ: Նման իրավիճակը ի չիք է դարձնում Աֆղանստանում կայունության ապահովմանն ուղղված միջազգային ջանքերը, եզրակացնում են զեկուցագրի հեղինակները:

AZG NEW PDF.qxd 22/06/2010 21:36 Page 1



# «ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ»-Ի ԶՈՅԳ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐԸ

Յունիսի 18-ին Բէյրութի Հայկազեան համալսարանի նիստերի սրահում տեղի ունեցաւ համալսարանի հայագիտական ամբիոնի գիտական հրատարակութեան՝ «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի հերթական՝ 30-րդ հատորի շնորհանդէսը: Այն միաժամանակ համընկնում է հանդէսի հրատարակման 40-ամեակի հետ:

Միջոցառումը վարում էր հանդէսի պատասխանատու քարտուղար, բանասէր **Անդրանիկ Տաքեսեանը,** որը ներկայացրեց հրատարակութեան անցած ուղին: 1970 թուականին լիբանանահայ վաստակաշատ մտաւորական, պատմ. գիտ. դոկտ. Երուանդ Քասունին հիմնել է «Հայկազեան հայագիտական հանդէս»-ը: Այն դարձել է Միջին Արեւելքի միակ ամէն տարի հրատարակուող հայագիտական հրատարակութիւնը՝ համախմբելով հիմնականում Սփիւռքի հայ եւ այլազգի մտաւորականներին: Հանդէսի հրատարակութիւնը որոշ ժամանակ դադարել է Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով:

Հայագիտական հրատարակութիւնների մէջ «Հայկազեան հայագիտական հանդէս»-ն առանձնանում է հայագիտութեան ըմբռնման լայնութեամբ՝ ներառելով հայ իրականութեանն առնչուող բոլոր բնագաւառները, իր էջերում հրատարակելով նիւթեր չորս լեզուներով (հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն), նաեւ համախմբելով հումանիտար բնագաւառներում աշխատող երիտասարդ ուժերին:

Խմբագրական կազմի անդամ դոկտոր **Արշալոյս Թոփալեանն** ընթերցեց ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի նախագահութեան շնորհաւորագիրը «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի կրկնակի յոբելեանների առթիւ: Այնուհետեւ խօսք առաւ հանդէսի խմբագրական կազմի անդամ, բանասէր **Արմէն Իւրնէշլեանը,** որը լուսանկարներով ներկայացրեց հանդէսը՝ կենտրոնանալով շնորհանդէսների վրայ, որից յետոյ ելոյթ ունեցաւ հիւր բանախօսը՝ «Հայկազեան հայագիտական հանդէս»-ի հայաստանեան ներկայացուցիչ **Արծուի Բախչինեանը**, Վերջինս հանդէս եկաւ «Արտասահմանի հայագիտութիւնը եւ Հայաստանը. «Հայկազեան հայագիտական հանդէս»-ը Հայաստանում» թեմայով զեկուցմամբ: Նա մասնաւորապէս ներկայացրեց 2000 թուականից ի վեր հայրենի հայագիտական շրջանակներում իր կատարած աշխատանքը: «Հայկազեան հայագիտական հանդէսը» սփիւռքահայ միակ հրատարակութիւնն է, որն ունի իր մշտական ներկայացուցիչը Հայաստանում եւ որը հետեւողականօրէն շնորհանդէսներ է կազմակերպում այնտեղ (Երեւան, Գիւմրի, Ստեփանակերտ): Ելոյթներ ունեցան նաեւ Հանդէսի աւագագոյն աշխատողը՝ պատասխանատու խմբագիր հայր Անդրանիկ ծայրագոյն վարդապետ Կռանեանը եւ Հայկազեան համալսարանի նախագահ վերապատուելի Փօլ Հայդոսթեանը, որոնք նոյնպէս արժեւորեցին Հանդէսի կատարած աշխատանքը Միջին Արեւելքում եւ առհասարակ սփիւռքահայ իրականութեան մէջ:

Հանդէսի 30-րդ հատորն աննախադէպ է իր ծաւալով եւ բովանդակութեամբ: Դասական հայագիտական յօդուածների եւ հաղորդումների կողքին առկայ են հայագիտութեան համար միանգամայն նորութիւն նկատուող ուսումնասիրութիւններ: Հանդէսի հայագիտական ոլորտն ընդգրկում է բանահիւսութիւնը (Ալվարդ Ջիւանեան՝ «Երկնքից ընկաւ երեք խնձոր». հայկական հեքիաթի աւարտի բանաձեւերը»), դրամագիտութիւնը (Եղիա Ներսէսեան՝ «Լեւոն Ա. թագաւորին քառորդ երկրամներն ու բիլլոնները»), հին գրականութիւնը (Հենրիկ Բախչինեան՝ «Հայ առաջին օրհներգուները»), նոր գրականութիւնը (Քնարիկ Աբրահամեան՝ «Առարկայական խորհրդանշապաշտութիւն. Զարեհ Խրախունին՝ շարժման ակունքներում»), պատմութեան տարբեր շրջանները (Գէորգ Ստեփանեան՝ «Համառօտ ակնարկ Շամախի քաղաքի հայութեան պատմութեան եւ հայ կրթարանների վրայ (ԺԹ. դար)», Սամուէլ Պողոսեան՝ «Հայկական բարեգործական ընդհանուր միութեան հիմնադրման հանգամանքները», Աւետիս Յարութիւնեան՝ «Ազգագրական, բանասիրական եւ պատմա-հնագիտական հետազօտութիւնները Վան-Վասպուրականի տարածքում 1910-1917-ին»), հայ գաղթավայրերը եւ Սփիւռքը (Տիգրան Բաղումեան՝ «Սէյդաբադի հայոց եկեղեցին եւ նշանաւոր մի քանի գերեզմանները», Արծուի Բախչինեան՝ «Ալբանիայի հայերը եւ հայ-ալբանական առնչութիւններ», Զաւէն Մսըրլեան՝ «Հայոց մասնակցութիւնը Էմիլ Լահուդի (1998-2007) նախագահութեան ժամանակաշրջանի Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն»), հայոց ցեղասպանութիւնը (Վարուժան Պողոսեան՝ «Համիդեան կոտորածները Ի. դարի սկզբի ֆրանսիական պատմագրութեան քննական լոյսի ներքոյ»), մանրանկարչութիւնը (Աւետ Աւետիսեան՝ «Փրկագործական թեման Զաքարիա Աւանցու մանրանկարներում»), կիրառական արուեստը (Վարդի Քէշիշեան՝ «Հալէպի Գանձատան սրբազան մասունքներն ու մասնատուփերը»), երաժշտութիւնը (Նաթալի Յարութիւնեան՝ «Ակնարկ երաժշտագէտ-մանկավարժ Հեղինէ Քացախեանի կեանքի եւ գործունէութեան», Ծովինար Մովսիսեան՝ «Ստեղծագործողի հաւատամքը»), բալէտագիտութեանը (Նազենիկ Սարգսեան՝ «Աշոտ Ասատուրեան (1937-1999). ստեղծագործական դիմանկար»), շարժանկարը (Սիրանոյշ Գալստեան՝ «Այլաբանութեան անցած ուղին հայկական խաղարկային կինոյում»):

«Քննարկումներ» բաժնում տեղ են գտել Արսէն Շահինեանի «Արմինիյա արաբական նահանգի սահմաններն ու վարչատարածքային բաժանումը ըստ արաբագիր սկզբնաղբիւրների», Վաչագան Գրիգորեանի «Նիբելունգների երգը հայերէն» եւ Եղիկ Ճերեճեանի «Երիտթուրք-հայ յարաբերութիւնները եւ օսմանեան ընդդիմադիր ուժերու առաջին խորհրդաժողովը» նիւթերը:

Հետաքրքրական եւ նոյնպէս հարուստ է «Հրապարակումներ» բաժինը, որտեղ ընդգրկուած են Միհրան Մինասեանի «Աբրահամ արք. Քիւբէլեան-Եկէնեանի զոյգ բանաստեղծութիւնները՝ նուիրուած Հալէպի 1813-ի ժողովրդական ապստամբութեան», Վաչէ Ղազարեանի «Էջեր ՀԲԸՄիութեան տարեգրութենէն», Վարդան Մատթէոսեանի «Կոստան Զարեանի նամակները Արշակ Չօպանեանին (1922-1931)», Գրիգոր Օրդոյեանի «Դերասանի վարպետութեան հիմունքների առաջին հայերէն ուսումնական ձեռնարկը» եւ Մելանիա Եղիազարեանի «Զապէլ Պոյաճեան. Նամակներ» նիւթերը:

«Գրախօսականներ» բաժնում ներկայացուած են երկու գիրք՝ ՀՀ ԳԱԱ Արուեստի ինստիտուտի հրատարակած Աշոտ Մուրադեանի կազմած «Հայ նուագարանային երաժշտութիւն. պարեղանակներ» եւ Արամ Քոչարեանի «Հարկանային եւ շնչական նուագարանները Հայաստանում» հատորները (գրախօս՝ Մարգարիտ Սարգսեան), ինչպէս նաեւ Հայկ Դեմոյեանի «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» գիրքը (գրախօս՝ Արծուի Բախչինեան):

Նշենք նաեւ, որ հանդէսում հրատարակուած նիւթերից հինգն անգլերէն են՝ Մուհամմեդ Մալէք Մոհամմադի եւ Մեսդի Զաֆարզադէ՝ «Անունների յոլովումը «Ավեստայում» եւ գրաբարում», Կոռնել Նադյի (Հունգարիա) «1693-ի Fidelis Relatio փաստաթուղթը եւ Տրանսիլվանիայի հայերը (յուշագիր Տրանսիլվանիայի հայ եկեղեցու պատմութեան)», Մաթիաս Բեռնլիւնդ՝ «Ատանան եւ նրանից անդին. 1908-1909 Օսմանեան կայսրութեան մէջ յեղափոխութիւն եւ ջարդարարութիւն դանիացիների աչքերով», Վահրամ Շեմմասեան՝ «Մուսալեռցի պանդուխտների ընկերային եւ տնտեսական վիճակը Միջին Արեւելքում 1920-30-ական թթ.», Միրվաթ Ալ-Սիբաիի՝ «Լիբանանահայերի գենետիկ առնչութիւնները. առաջին փորձ», երկուսն՝ արաբերեն (Նորա Արիսեան՝ «Հայոց ցեղասպանութիւնը սուրիական վտարանդիական մամուլին մէջ», Տաաս ՊուՄալիհապ Աթալլա՝ «Ժամանակակից հայկական պետութիւնը միջազգային աշխարհագրաքաղաքականութեան մէջ»):

«Մահագրութիւն» բաժնում ընդգրկուած են 2010-ին մեզնից հեռացած հայագէտների եւ հայագիտութեամբ զբաղուած գիտնականների կենսագրականներ (Նայիմ Էլ-Եաֆի, Վառլամ Մարտիրոսեան, Էմմա Կորխմազեան, Գրիգոր Շահինեան, Արմէն Հախնազարեան, Կարէն Իւզբաշեան եւ Հենրիկ Իգիթեան):

Լայն է նաեւ հանդէսի այս հատորի հեղինակների աշխարհագրութիւնը՝ Լիբանանից եւ Հայաստանից բացի՝ Սիրիա, ԱՄՆ, Ռուսաստան (Սանկտ-Պետերբուրգ), Հունգարիա, Դանիա եւ Իրան:

«Հայկազեան հայագիտական հանդէս»-ի հատորները տրամադրելի են Երեւանի հանրային գրադարաններում եւ գիտական կենտրոններում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
Բէյրութ-Երեւան

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոցի սաները տարեվերջյան համերգին

**Մշակույթի զարգացման բնականոն ընթացքը պայմանավորված է նաեւ անցյալի արժեքային համակարգի, դրա ստեղծող-կրողների հաջորդական շղթայի պահպանմամբ: Այդ անցյալի երախտավորներից կան, իհարկե, հանիրավի՝ եթե ոչ մոռացության, համենայն դեպս արժանի ճանաչման չարժանացածներ, որոնց ստեղծագործությունների ուսումնասիրումն ու հանրայնացումը ոչ միայն պարտք, այլ նաեւ մեզ ու հաջորդ սերունդների համար անհրաժեշտություն է:**

**Մեծն Կոմիտասի աշակերտ, ռոդոսցի մեր տաղանդավոր հայրենակից Բարսեղ Կանաչյանի անունը 1964-ից հետո միայն Հայաստանում լսվեց: Մեր երաժշտական կյանքում Կանաչյանի արվեստը ճանաչելի դարձավ Անահիս Ցիցիկյանի շնորհիվ, որը տաղանդավոր ջութակահար լինելուց բացի երաժշտագետ էր եւ նաեւ ինքնակամ առաքելություն ստանձնած՝ հայ երաժշտարվեստին էր վերադարձնում մոռացության մատնված, կամ նոր, անհայտ անուններ: 1963-ին Բաղդադում կոմպոզիտորի հետ ջութակահարուհու հանդիպումը սկիզբ է դնում Կանաչյանի արվեստի ուսումնասիրմանն ու տարածմանը՝ չնայած խորհրդային կուսակցական գաղափարախոսական արգելքներին, Անահիս Ցիցիկյանին հաջողվում է քսանից ավելի հոդվածներ տպագրել ժամանակի մամուլում, որոնք նպաստեցին Կանաչյանի ստեղծագործությունների տարածմանը:**

**Այս տարի լրանում է երգահանի ծննդյան 125-ամյակը, եւ այդ առիթով «Ազգի» պատվերով մեր թերթում տպագրվեց երաժշտագետ Լուսինե Սահակյանի՝ Կանաչյանի ստեղծագործական կյանքը ընդհանուր գծերով ներկայացնող հոդվածը (12 հունիս, 2010 թ.), որտեղ հեղինակը նշում է նաեւ, որ կոմպոզիտորի գործունեությունն ու արվեստը «պատշաճ կերպով ներկայացված չեն» եւ հույս է հայտնում, թե այդ բացը կլրացնի արդի հայ երաժշտագիտությունը (հրապարակման մեջ ակնարկված չէ Անահիս Ցիցիկյանի հոդվածները):**



**2000 թվականին Երեւանի թիվ 17 երաժշտական դպրոցի անվանակոչումը Բարսեղ Կանաչյանի պատվին, կարծում ենք, նրա ստեղծագործությունների հանրայնացման գործում, նշանակություն ունեցել է եւ ունի: 2003թ., երբ Արմինե Մուրադյանը ստանձնեց դպրոցի տնօրենությունը, այստեղ սովորում էր 98 աշակերտ: Մեկ տարի անց ուսումնական ծրագրերի եւ բաժինների ընդլայնմանը զուգահեռ կրթարանը վերակազմավորվեց արվեստի դպրոցի. երաժշտականին կից արդեն ձեւավորվել էին նկարչական, պարարվեստի, թատերական բաժիններ, բացվեցին ժող. նվագարանների նոր դասարաններ (ուդ, թառ, քյամանչա, դհոլ, դուդուկ, ակորդեոն եւ այլն), երաժշտական ավանդական բաժինները (լարային, դաշնամուրային) համալրվեցին (վոկալ՝ դասական, ժողովրդական, էստրադային), 2005-ին կազմավորվեց ժող. գործիքների համույթը՝ Հովիկ Սահակյանի ղեկավարությամբ:**

**Այժմ դպրոցն ունի 286 աշակերտ: Վերջին տարիներին քառորդդարյա կենսագրությամբ դպրոցի ավանդույթներն ավելի հարստացել եւ արդիականացել են: Շատ կարեւոր է տնօրենի եւ մանկավարժների ակտիվ ջանքերն ու նվիրումը՝ ստեղծագործական մթնոլորտ ձեւավորելու, որը, անշուշտ, բարերար ազդեցություն է ունենում՝ սովորողների ոչ միայն մասնագիտական կրթությունը, նաեւ գեղագիտական ճաշակը զարգացնելու եւ հղկելու: Անվանի երաժիշտների հետ հաճախակի հանդիպումները, նրանց կողմից տրվող վարպետաց դասերը, հոբելյանական միջոցառումները, դպրոցական համերգային ծրագրերը, թատերական ներկայացումները, ցուցահանդեսները երեխաներին պահում են արվեստի, գեղեցիկի միջավայրում: Նման ստեղծագործական աշխատանքները, իհարկե, իրենց պտուղները չեն կարող չտալ, որի դրսեւորումները հանրապետական եւ միջազգային տարբեր մրցույթ-փառատոններին սաների մասնակցությունն ու դրանցում բազմաթիվ մրցանակների, պարգեւների արժանանալն է:**

**Այդ նվաճումների շարքում հիշատակման է արժանի Գյումրիի «Վերածնունդ» 2010 թ. միջազգային փառատոնին՝ դպրոցի սաների ստացած երկու ոսկե եւ երկու արծաթե մեդալները, նրանցից Էլեն Թագմիզյանը (դասատու Նատալյա Սոսինյան) «Դաշնամուր» անվանակարգում միակ ոսկե մեդալակիրն էր, իսկ դասական վոկալ անվանակարգում Հովհաննես Խաչերյանն էր (դասատու՝ Նարինե Թովմասյան) առաջինը: Դպրոցի սաները հաջողություններ են արձանագրել նաեւ «Իզաբել» հանրապետական մրցույթ-փառատոնին. իսկ վերջերս կայացած Երեւանի երաժշտական դպրոցների ստուգատես-փառատոնում լավագույն նկատված երկու աշակերտ կմասնակցի հունիսի 23-ի գալա-համերգին, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում: Ընթացիկ ամսին կայացած «Դելփյան խաղեր» միջազգային մրցույթի նախընտրական փուլում հաղթող ճանաչված նկարչական բաժնից Ալբերտ Բաղդասարյանը եւ Մարիամ Միրզոյանը (ուդի դասարան) ընդգրկվել են Հայաստանի պատվիրակության կազմում:**

**Երաժշտական դպրոցների ուսումնական ընթացքը լավագույնս ամփոփում են տարեվերջյան հաշվետու համերգները, որոնք սովորաբար հունիսին են կայանում: Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոցի այս տարվա ավարտական համերգը տեղի ունեցավ անցած ուրբաթ, Կամերային երաժշտության տանը՝ ուսուցիչների, ծնողների, քաղաքապետարանի եւ Կենտրոն թաղապետարանի մշակույթի բաժնի վարիչներ Էլեոնորա Թումանյանի եւ Գագիկ Գյանջումյանի ներկայությամբ. վերջիններիս աջակցությունն ու ուշադրությունը դպրոցին իր շնորհակալական խոսքում հատուկ ընդգծեց դպրոցի տնօրեն Արմինե Մուրադյանը, նա համերգից հետո ավարտական վկայականներ հանձնեց այս տարվա շրջանավարտներին:**

**Իսկ համերգային ծրագիրը բավական խիտ ու բազմաբնույթ էր (Ռիմսկի Կորսակով, Դանցի, Կռիլատով, Բոնոնչինի, Ծ. Համբարձումյան, Մ. Վարդազարյան, Մակ Դոուել, Մոնտի եւ այլն): Համերգի մասնակիցները, բնականաբար, մրցույթ-փառատոնում հաղթողները, դպրոցի լավագույն սաներն էին՝ շնորհալի, օժտված երեխաներ: Նրանցից մի քանիսի կատարողական տեխնիկան ուղեկցվում էր բեմական արտահայտչականությամբ, արտիստիկ շարժուձեւով, ներշնչումով ու անմիջականությամբ:**

**Համերգային ծրագրի հաջողված ու գեղեցիկ մի շարք կատարումների մեջ դահլիճը ոգեւորությամբ արձագանքեց հատկապես հայկական ժողովրդական երաժշտության կատարումներին:**

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

AZG NEW PDF.qxd 22/06/2010 21:59 Page 1





# Ֆրանսիացիները տապալվեցին

Իսպանիա-Հոնդուրաս մրցախաղով ավարտվեց աշխարհի առաջնության խմբային մրցաշարի 2-րդ տուրը: Եվրոպայի չեմպիոնները, որ մեկնարկում շատերի համար անսպասելի պարտվել էին շվեյցարացիներին, պարտավոր էին հաղթել Հոնդուրասի ընտրանուն, եթե ցանկանում էին շարունակել պայքարը: Իսպանացիները մեծ առավելություն ունեին, սակայն գոլային բազում պահերից իրացրին միայն երկուսը: Աչքի ընկավ իսպանացիների ներկայիս ռմբարկու Դավիթ Վիյան՝ երկու անգամ գրավելով հոնդուրասցիների դարպասը: Նա կարող էր իր օգտին հեթ-տրիկ գրանցել, սակայն չիրացրեց 11 մ հարվածը:

Այդ հաղթանակից հետո A խմբում իսպանացիները 3 միավորով զբաղեցրին 2-րդ տեղը: Նույնքան միավոր ունեն նաեւ շվեյցարացիները: Իսկ աղյուսակը 6 միավորով գլխավորում է Չիլիի ընտրանին: Պայքարը շարունակելու համար իսպանացիներին հարկ կլինի հաղթել չիլիացիներին, որոնք լավ տպավորություն են թողնում: Բացառված չէ, որ ուղեգրի տերերին որոշելու համար հարկ լինի հաշվել խփած եւ բաց թողած գնդակները: Դա էր պատճառը, որ իսպանացիների գլխավոր մարզիչ Վիսենտե դել Բոսկեն դժգոհ էր մնացել գոլային պահերի իրացումից, ինչի մասին նա խոսեց մամուլի ասուլիսում:



**Վիսենտե դել Բոսկե (Իսպանիա)**-Առանձնապես բավարարված չեմ այս հաղթանակով: Գտնում եմ, որ ավելի շատ գոլեր պետք է խփեինք: Մենք խաղում էինք նույն ոճով, ինչպես որ շվեյցարացիների հետ մրցավեճում՝ մեր կամքն էինք թելադրում մրցակցին, գոլային պահեր շատ ստեղծեցինք: Ի տարբերություն առաջին խաղի, այսօր ավելի վստահ խաղացինք: Չիլիի հավաքականը շատ ագրեսիվ ֆուտբոլ է ցուցադրում, հուսալի է գործում պաշտպանությունում: Շատ դժվար կլինի չիլիացիների տուգանային հրապարակ ներխուժելը: Նրանք փոքր ուժերով են գրոհում եւ արագորեն վերադառնում են հետ: Չիլին շատ լուրջ մրցակից է: Եթե այսօրվա խաղի նման գոլային պահերը չիրացնենք, ապա լուրջ խնդիրներ կունենանք:

**Ռեյնալդո Ռուեդա (Հոնդուրաս)**-Այսօր մեզ չբավականացրեց վստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Մարտական ոգին չբավականացրեց, որպեսզի դիմագրավեինք ավելի ուժեղ մրցակցին: Ուստի մեր պարտությունը զարմանալի չէր:

Երեկ A եւ B խմբերի հավաքականների հանդիպումներով սկսվեց խմբային մրցաշարի ավարտական տուրը: Մրցակարգի համաձայն, խմբում կայանալիք երկու հանդիպումները նշանակված են նույն ժամին:

Առաջինը խաղադաշտ դուրս եկան A խմբի հավաքականները: Ուրուգվայ-Մեքսիկա խաղում մրցակիցներին բավարարում էր ոչ-ոքի արդյունքը 1/8 եզրափակիչ մտնելու համար, ուստի բուքմեյքերները ոչ-ոքին գնահատել էին 1,8 գործակցով: Մեքսիկացիների հաղթանակը գնահատվում էր 3,25 գործակցով, ուրուգվայցիներինը՝ 3,8:

Իհարկե, երկու հավաքականների համար էլ ոչ-ոքին ձեռնտու արդյունք էր: Սակայն կար մի նրբություն: Ոչ-ոքիի դեպքում մեքսիկացիները խմբում կգրավեին 2-րդ տեղը եւ 1/8 եզրափակիչում ամենայն հավանականությամբ պետք է մրցեն արգենտինացիների հետ: Իսկ դա նրանց ձեռնտու չէ: Ուստի Մեքսիկայի հավաքականի գլխավոր մարզիչ Խավիեր Ագիրեն խոստացել էր խաղալ հաղթանակի համար: Բացի այդ էլ, նույնիսկ թիմերից մեկի պարտության դեպքում հնարավոր էր, որ Մեքսիկան եւ Ուրուգվայը շարունակեն պայքարը, քանի որ ուղեգիր նվաճելու համար ֆրանսիացիներին հարկավոր էր բավական խոշոր հաշվով հաղթել ՀԱՀ հավաքականին:

Ֆրանսիայի հավաքականում ծագած կոնֆլիկտից հետո երկուշաբթի օրը ֆուտբոլիստները վերսկսեցին մարզումները: Կոնֆլիկտի հարթմանը միջամտել էր Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, որը խնդրել էր ՀԱՀ-ում գտնվող երկրի սպորտի նախարար Ռոզելեն Բաշելոյին հանդիպել թիմի գլխավոր մարզիչ Ռայմոն Դոմենեկի, ավագ Պատրիս Էվրայի եւ ֆուտբոլի ֆեդերացիայի նոր նախագահ Ժան Պիեռ Էսկալետի հետ:

Ինչպես ակնկալվում էր, այդպես էլ հրաշք տեղի չունեցավ ու 2006-ի աշխարհի փոխչեմպիոն Ֆրանսիայի հավաքականը հրաժեշտ տվեց առաջնությանը: Ֆրանսիացիների ճամբարում վերջին օրերին ծավալված սկանդալային իրադարձությունները չէին կարող իրենց կնիքը չթողնել հավաքականի անդամների գործողությունների վրա: Նախորդ հանդիպումներում ոչինչով աչքի չընկած ֆրանսիացիներին ՀԱՀ հավաքականի հետ խաղում էլ չհաջողվեց հաղթանակի հաճույքը վայելել: Հարավաֆրիկացի ֆուտբոլիստները դեռեւս առաջին խաղակեսում Կումալոյի եւ Մֆելայի հարվածների շնորհիվ հաշվի մեջ առաջ անցան: Առաջնության կազմակերպիչները լավ հնարավորություն ստացան պայքարելու 1/8 եզրափակիչի ուղեգրի համար, քանի որ զուգահեռ ընթացող խաղում ուրուգվայցիները Սուարեսի խփած գոլի շնորհիվ հաղթում էին մեքսիկացիներին:

Բայց հարավաֆրիկացիները չկարողացան զարգացնել հաջողությունը: Ավելին, ընդմիջումից հետո Մալուդան կրճատեց հաշիվը՝ 2-1: Թեեւ ՀԱՀ հավաքականը հաղթեց, սակայն դա բավարար չէր հաջորդ փուլ դուրս գալու համար: Մեքսիկացիները թեեւ պարտվեցին 0-1 հաշվով, սակայն գնդակների ավելի լավ տարբերության շնորհիվ խմբում գրավեցին 2-րդ տեղը:

Աշխարհի առաջնությունների պատմության մեջ 3-րդ անգամ աշխարհի գործող փոխչեմպիոնին չհաջողվեց հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը: Ֆրանսիացիներից բացի, աշխարհի հաջորդ առաջնությունում տապալվել են նաեւ 1954-ի փոխչեմպիոն Հունգարիայի եւ 1970-ի արծաթե մեդալակիր Իտալիայի հավաքականները: Իսկ ահա աշխարհի առաջնության կազմակերպիչներն առաջին անգամ հաջորդ փուլ չմտան:

**Մրցաշարային աղյուսակ**

A խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1.Ուրուգվայ | 3 | 2 | 1 | 0 | 4-0 | 7 |
| 2.Մեքսիկա | 3 | 1 | 1 | 1 | 3-2 | 4 |
| 3.ՀԱՀ | 3 | 1 | 1 | 1 | 3-5 | 4 |
| 4.Ֆրանսիա | 3 | 0 | 1 | 2 | 1-4 | 1 |

# Ռահմանը վերադարձը նշեց հաղթանակով



Գերծանր քաշային կարգում աշխարհի նախկին կրկնակի չեմպիոն Հասիմ Ռահմանն իր վերադարձը ռինգ նշանավորեց Շենոն Միլլերի նկատմամբ տոնած հաղթանակով: 10-ռաունդանոց վարկանիշային մենամարտում Ռահմանը մրցակցին 4 անգամ նոկդաունի ենթարկեց: 4-րդ ռաունդում Միլերի մարտավկաների պահանջով մենամարտը դադարեցվեց եւ տեխնիկական նոկաուտով հաղթանակ գրանցվեց Ռահմանի օգտին:

«Սա այն էր, ինչն ինձ հարկավոր էր ապացուցելու բոլորին, որ Հասիմ Ռահմանը վերադառնում է ռինգ», նշել է Ռահմանը:

«Նա նոկաուտի ենթարկող ուժեղ հարվածների է տիրապետում: Ես էլ փորձեցի հնարավորին չափով հարվածել նրան, հուսալով, որ հաջողության կհասնեմ», հայտարարել է Միլերը:

# Հոնդուրասցի երեք եղբայրները

**Աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ մասնակից հավաքականներից մեկի՝ Հոնդուրասի կազմում ընդգրկված են 3 եղբայրներ՝ 23-ամյա Ջոնի, 25-ամյա Ուիլսոն եւ 28-ամյա Ջերի Պալասիոսները: Ընդ որում վերջինս իր եղբայրներին է միացել օրերս՝ փոխարինելով վնասվածք ստացած Խուլիո Սեսար դե Լեոնին: Չիլիի հավաքականի հետ հանդիպմանը եղբայրներից խաղաց միայն անգլիական «Տոտենհեմում» հանդես եկող Ուիլսոն Պալասիոսը: Նա հավաքականի մեկնարկային կազմում էր նաեւ իսպանացիների հետ խաղում: 84-րդ րոպեին խաղադաշտ մտավ նաեւ Ջերի Պալասիոսը՝ փոխարինելով Սուասոյին:**

**Պալասիոսները եւս մեկ եղբայր ունեին՝ կրտսեր Էդվինը, որին առեւանգել ու սպանել են, թեեւ նրա համար 150 հազար դոլար փրկագին էին վճարել: Ուիլսոնը հայտարարել է, որ ֆուտբոլում իր բոլոր նվաճումները Էդվինի հիշատակին է նվիրում:**



# Գրիգորյանը հաղթողին զիջեց կես միավորով

**Վորոնեժում անցկացված շախմատի մրցաշարում Հայաստանի շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ հանրապետության այս տարվա չեմպիոն Ավետիք Գրիգորյանը: Նա 9 հնարավորից վաստակած 6,5 միավորով գրավեց 5-րդ տեղը 103 մասնակիցների մեջ: Ավետիքը վերջին 4 տուրերում իր օգտին 3 միավոր գրանցեց: Նա հաղթեց Միխայիլ Կոբիլյանին եւ Արթուր Գաբրիելյանին, ոչ-ոքի ավարտեց պարտիաները Լեոնիդ Գոլովինի եւ Վյաչեսլավ Զախարցովի հետ: Հայ շախմատիստը մրցաշարն անցկացրեց առանց պարտության:**

**Գրիգորյանն ընդամենը կես միավորով հետ մնաց ռուսաստանցիներ Ալեքսանդր Ռահմանովից ու Դենիս Խիսմատուլլինից: Լրացուցիչ գործակիցներով հաղթող ճանաչվեց Ռահմանովը: Հայ շախմատիստներից 2-րդ արդյունքը ցույց տվեց Սուրեն Պողոսյանը, որը 5 միավորով գրավեց 42-րդ տեղը: Տիգրան Սիմոնյանը 4,5 միավորով 58-րդն է, Վարդան Գրիգորյանը 4 միավորով՝ 74-րդը: Առավել անհաջող խաղաց Աղասի Ինանցը, որը 3 միավորով գրավեց 89-րդ տեղը:**

# Մխիթարյանն առաջատարների խմբում է

**Բրազիլահայ միջազգային վարպետ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաջող է մեկնարկել Ռումինիայի Էֆորիե քաղաքում անցկացվող շախմատի մրցաշարում: 5 տուրից հետո նա 4 միավորով 9-րդ տեղում է: Մրցաշարին մասնակցում են 150 շախմատիստներ:**

**Մխիթարյանը մրցաշարը սկսեց ռումինացիներ Մադալինա-Մարիա Անուսկայի եւ Իրինա Բուլմագայի նկատմամբ տոնած հաղթանակներով: Այնուհետեւ նա ոչ-ոքի խաղաց իսլանդացի Բյոռն Թորֆինսոնի հետ, հաղթեց լիտվացի Մինդաուգաս Բեյնորասին եւ հաշտություն կնքեց իսրայելցի Իսրայել Կասպիի հետ:**

**Մրցաշարի միանձնյա առաջատարն իտալացի Դանիել Վոկատուրոն է, որը հաղթել է բոլոր 5 պարտիաներում: Նրան կես միավորով են զիջում ռուսաստանցիներ Իրինա Տուրովան, Մաքսիմ Տուրովը, բելառուսցի Ալեքսեյ Ֆյոդորովն ու լիտվացի Սարունաս Սուլսկիսը:**

# Ֆեդերերը հրաշքով փրկվեց պարտությունից



**Անգլիայում մեկնարկել է «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքի թենիսի ամենահին մրցաշարը՝ Ուիմբլդոնը: Այս տարի մրցանակները կխաղարկվեն 123-րդ անգամ: Ուիմբլդոնի մրցաշարին թենիսիստները մտցատես առանձնակի ջանասիրությամբ են նախապատրաստվում: Բացի լավ մարզավիճակ ձեռք բերելուց, նրանք նաեւ պետք է սպիտակ մարզահագուստ նախապատրաստեն, քանի որ ստեղծված ավանդույթի համաձայն մասնակիցներն այդ գույնի հանդերձանք պետք է կրեն:**

**Ցավոք, վնասվածքի պատճառով մրցաշարին չի մասնակցում Դավիթ Նալբանդյանը: Նույն պատճառով բացակայում են Իվո Կառլովիչը, Մարիո Անչիչը, Ռիշար Գասկեն եւ Ռադեկ Շտեպանեկը:**

**1977-ից հետո առաջին անգամ, հունիսի 24-ին Ուիմբլդոնի մրցաշարին ներկա կգտնվի Էլիզաբեթ Երկրորդ թագուհին: Հետաքրքրական է նաեւ, որ մրցաշարի անցկացման 133-ամյա պատմության ընթացքում տղամարդկանց մրցաշարի հիմնական փուլի մասնակիցների մեջ ոչ մի անգլիացի թենիսիստ չկա:**

**Մեծ դժվարությամբ առաջին փուլի արգելքը հաղթահարեց Ուիմբլդոնի գործող չեմպիոն Ռոջեր Ֆեդերերը: 5 խաղափուլ պահանջվեց կոլումբիացի Ալեխանդրո Ֆայյային հաղթելու համար: Ընդ որում առաջին երկու խաղափուլերից հետո կոլումբիացին առջեւում էր 2-0 հաշվով (7-5, 6-4): Եվ միայն մեծ ջանքերի գնով Ֆեդերերին հաջողվեց կորզել հաղթանակը (6-4, 7-6, 6-0): Խաղից հետո Ֆեդերերը խոստովանել էր, որ ինքն արժանի էր պարտության:**

**Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարած թենիսիստների թվում են Առնո Կլեմանը, Յուրգեն Մելցերը, Ռայներ Շուտլերը, Նիկոլայ Դավիդենկոն, Մարդի Ֆիշը, Էնդի Ռոդիկը:**

**Կանանց մրցաշարում հաղթանակներ տոնեցին Կիմ Կլիյստերսը, Մարիա Կիրիլենկոն, Ժյուստին Էնենը, Նադեժդա Պետրովան, Վերա Զվոնարյովան:**

# Ջերմուկում կանցկացվի Գրան պրիի 4-րդ փուլը

**Հունիսի 24-ին Ջերմուկում կմեկնարկի շախմատի կանանց Գրան պրիի 4-րդ փուլի մրցաշարը, որը միաժամանակ կնվիրվի շախմատային կոմպոզիցիայի արքա Հենրիկ Գասպարյանի ծննդյան 100-ամյակին:**

**Մրցաշարում հանդես կգան 12 շախմատիստուհիներ, որոնց թվում են Լիլիթ Մկրտչյանը (2477) եւ Էլինա Դանիելյանը (2473): Նրանց մրցակիցները կլինեն չինացի շախմատիստուհիներ Հոու Յիֆանը (2589), Սյու Յուհուանը (2484), Շեն Յանը (2452), բուլղարուհի Անտոանետա Ստեֆանովան (2560), շվեդուհի Պիա Կրամլինգը (2536), ռուսաստանցիներ Տատյանա Կոսինցեւան (2534) եւ Բահրա Կովանովան (2366), վրացիներ Մայա Չիբուրդանիձեն (2514) ու Նանա Ձագնիձեն (2478) եւ էկվադորցի Մարթա Ֆիեռոն (2363):**

# Գերմանացիներն արդեն պատվիրել են տոմսերը

**Գերմանիայի հավաքականի ղեկավարությունն ապահովության համար արդեն հայրենիք մեկնելու համար ավիատոմսեր է պատվիրել: Եթե այսօր Գանայի հավաքականի հետ խաղում գերմանացիներին չհաջողվի 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճել, ապա հինգշաբթի Գերմանիայի հավաքականը Յոհանեսբուրգից կմեկնի Ֆրանկֆուրտ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Վերավարկանշվել են մի շարք ձեռնարկություններ

## Վերավարկանշվել է «Էլիs Գrուպ» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Էլիs Գrուպ» ՓԲԸ-ին` շնորհելով «Գ» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ», որը շնորհվել էր 04.03.2009թ.:

## Վերավարկանշվել է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ին` շնորհելով «Գ+» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ+», որը շնորհվել էր 30.01.2009թ.:

## Վերավարկանշվել է «Անտարես» ՍՊԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Անտարես» ՍՊԸ-ին` շնորհելով «Գ» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ -», որը շնորհվել էր 04.03.2009թ.:

## Վերավարկանշվել է «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ-ին` շնորհելով «Գ +» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ +», որը շնորհվել էր 04.03.2009թ.:

## Վերավարկանշվել է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ին` շնորհելով «Գ+» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ+», որը շնորհվել էր 04.03.2009թ.:

## Վերավարկանշվել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին` շնորհելով «Գ» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ», որը շնորհվել էր 28.11.2008թ.:

## Վերավարկանշվել է «Օնիքս ԳԸ» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Օնիքս ԳԸ» ՓԲԸ-ին` շնորհելով «Դ+» վարկանիշ:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ -», որը շնորհվել էր 30.04.2009թ.:

## Դադարեցվել է «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի վարկանշումը

ՀՀ կենտրոնական բանկը դադարեցրել է «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի վարկանշումը` ձեռնարկության կողմից համագործակցության բացակայության պատճառով:

Նախորդ վարկանիշը եղել է «Գ+», որը շնորհվել էր 14.03.2008թ.:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

USAID FROM THE AMERICAN PEOPLE

MOBILIZING ACTION AGAINST CORRUPTION

# ՀԱՅՏԱՀՐԱՎԵՐ

Շահերի պաշտպանության եւ աջակցության կենտրոններ 3-րդ շրջան

Վերջնաժամկետը` **14 հուլիսի, 2010թ., 12:00**

Դրամաշնորհի ավարտման վերջնաժամկետը` **30 հունիսի, 2011թ.**

Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը (ՀԳՄԾ), որը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կողմից (ԱՄՆ ՄԶԳ) եւ իրականացվում է «ԴայնՔորփ» միջազգային ընկերության «Կասալս ենդ Ասոշիեյթս» Ինք.-ի (Կասալս) կողմից, ընդունում է հայտադիմումներ հայաստանյան ՀԿ-ներից եւ այլ որակավորված կազմակերպություններից` Հայաստանի տասնմեկ (11) քաղաքներում Շահերի պաշտպանության եւ աջակցության կենտրոններ կամ ընդունարաններ ստեղծելու եւ/կամ գործարկելու համար:
Սույն հայտարարության ամբողջական տեքստի, ինչպես նաեւ հայտադիմումի ամբողջական փաթեթի համար խնդրում ենք այցելել **http://www.maac.am/announcements.htm** կայքէջը:

VIVAcell MTS

Տեղեկացնում ենք, որ Վրաստանի բջջային ցանցերում ռոումինգում գտնվող Վիվասել-ՄՏՍ-ի կանխավճարային բաժանորդների համար ս. թ. հուլիսի 1-ից սահմանվում են հետեւյալ սակագները.

| Զանգեր | դրամ/րոպե |
|---|---|
| Դեպի Հայաստան | 950 |
| Տեղական ուղղություններով | 340 |
| Միջազգային ուղղություններով | 1700 |
| SMS | դրամ/SMS |
| Բոլոր ուղղություններով | 115 |

### Հայտարարություն

Սույն թվականի հունիսի 28-ին, ժամը 12:00-ին տեղի կունենա Հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով անցնող «**Բերդ**» 110 ԿՎ ՕԳ-ի տեղափոխման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում:

Հեռ. 22-15-68

www. azg.am

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժնի առաջատար մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**

**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

- անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը, ապահովում է դատախազությունում ստացվող փաստաթղթերի գրանցման եւ առաքման ապահովումը, փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) միջին մասնագիտական կրթություն, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «6» հուլիսի 2010թ.:

Մրցույթն անցկացվելու է «23» հուլիսի 2010թ. ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

### Հաշվապահական հաշվեկշիռ
### «ԱՐՄ-ԳԼԱՍ» ՍՊԸ

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«ԱՐՄ-ԳԼԱՍ» ՍՊԸ** | 39105198 |
| Փաստացի գործունեության հիմնական տեսակը | Ապակե տարաների արտադրություն | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 1111002100 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | 03525902 | |
| Չափի միավորը | հազ. դրամ | |
| Գտնվելու վայրը | Ք.Աբովյան,Կարմիր Բանակայինների 23 | |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Ք.Աբովյան,Կարմիր Բանակայինների 23 | |

*հազ. դրամ*

| **ԱԿՏԻՎՆԵՐ** | **31.12.2008 (վերաներկայացված)** | **31.12.2009 (աուդիտ անցած)** |
|---|---|---|
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | |
| Հիմնական միջոցներ | 912,751 | 939,323 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 16,113 | 67,596 |
| Ոչ նյութական ակտիվներ | 1,295 | 600 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 22,867 | 5,337 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 953,026 | 1,012,856 |
| Ընթացիկ ակտիվներ | | |
| Նյութեր | 260,668 | 135,069 |
| Արագամաշ առարկաներ | 14,300 | 10,400 |
| Անավարտ արտադրություն | 7,740 | 5,254 |
| Արտադրանք | 105,834 | 204,018 |
| Ապրանքներ | - | 1,820 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 22,622 | 41,135 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 378,944 | 454,354 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 2,747 | 29,204 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 58,787 | 188,639 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 104,947 | 142,969 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 956,589 | 1,212,862 |
| Ընդամենը ակտիվներ | 1,909,615 | 2,225,718 |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Սեփական կապիտալ | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 589,543 | 971,493 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 589,593 | 971,543 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 972,597 | 714,706 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 24,869 | - |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 997,466 | 714,706 |
| Ընթացիկ պարտավորություններ | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 129,029 | 166,269 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 24,959 | 49,106 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 25,302 | 126,268 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 30,733 | 49,069 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 3,100 | 3,725 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 9,078 | 9,323 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 100,355 | 135,709 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 322,556 | 539,469 |
| Ընդամենը պարտավորություններ եւ սեփական կապիտալ | 1,909,615 | 2,225,718 |



### Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
### «ԱՐՄ-ԳԼԱՍ» ՍՊԸ
### դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

*հազ. դրամ*

| | 01/01/2008 - 31/12/2008 (աուդիտ անցած) | 01/01/2009 - 31/12/2009 (աուդիտ անցած) |
|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 2,059,618 | 2,309,986 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | (1,620,770) | (1,638,544) |
| Համախառն շահույթ (վնաս) | 438,848 | 671,442 |
| Իրացման ծախսեր | (65,045) | (86,344) |
| Վարչական ծախսեր | (46,758) | (55,343) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 327,045 | 529,755 |
| Գործառնական այլ եկամուտներ | 28,610 | 7,856 |
| Գործառնական այլ ծախսեր | (36,378) | (9,405) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 319,277 | 528,206 |
| Ֆինանսական ծախսեր | (33,635) | (43,696) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 15,585 | (2,089) |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 301,227 | 482,421 |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | - | - |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 301,227 | 482,421 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | (63,386) | (100,471) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 237,841 | 381,950 |



**«Արմ-Գլաս» ՍՊԸ**
**2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթների վերաբերյալ**

### ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄ-ԳԼԱՍ» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմ-Գլաս» ՍՊԸ հաշվապահական հաշվեկշիռը` առ 1-ը հունվարի 2010թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտն իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատել հաշվետվություններում եւ այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք` ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները «Արմ-Գլաս» ՍՊԸ ֆինանսական վիճակի` առ 1-ը հունվարի 2009թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը, կազմված են ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների եւ ՀՀ Օրենսդրության պահանջներին համապատասխան:

21 մայիսի 2010թ.
Երեւան



ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 22.06.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: